

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

«Ճապոնիան Մեյձիի դարաշրջանում. 19-րդ դարի երկրորդ կես-  
20-րդ դարի սկիզբ»



**Պաշտպանող՝** Տիգրան Գրիգորյան /11-րդ դասարան/

**Ղեկավար՝** Վարդան Կարապետյան

**Գրախոս՝** Լիլիթ Մկրտչյան. ԵՊՀ պատմության ֆակուլտետի Համաշխարհային պատմության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների դոցենտ, ԿԶՆԱԿ հիմնադրամի տնօրենի տեղակալ

2023-2024 ուս. տարի

## Բովանդակություն

1. Ներածություն -----Էջ 3
2. Նախաբան ----- Էջ 5
3. Գլուխ I. Ճապոնիան 1850-1860-ական թթ. ----- Էջ 7-14
4. Գլուխ II. Ճապոնիան 1870-ականներին ----- Էջ 14-28
5. Գլուխ III. Ճապոնիան 1880-ականներին ----- Էջ 29-34
6. Գլուխ IV. Ճապոնիան 1890-ականներին ----- Էջ 34-40
7. Գլուխ V. Ճապոնիան 1900-ականների սկզբին ----- Էջ 40-50
8. Վերջաբան ----- Էջ 51
9. Աղբյուրներ -----Էջ 52

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում իրականացվում է հեղինակային կրթական ծրագիր, որի կարևոր բաղկացուցիչն է դարձել հետազոտական աշխատանքը՝ որպես Ավագ դպրոց-վարժարանի առանձնահատկություն և ձեռքբերում: Հետազոտական աշխատանքի շնորհիվ մեր ուսումնական գործունեությունը դարձել է ավելի հետաքրքիր, հագեցած և բովանդակալից:

Արդեն երկրորդ ուսումնական տարին է, ինչ իրականացնում են հետազոտական աշխատանք: Նախորդ ուսումնական տարում իմ աշխատանքի թեման եղել է «Կորեայի պատմությունը», որը ղեկավարել է հասարակագետ Վարդան Կարապետյանը, իսկ այս ուսումնական տարում, որպես հետազոտական աշխատանքի թեմա, ընտրել են «Ճապոնիան Մեյձիի դարաշրջանում. 19-րդ դարի երկրորդ կես-20-րդ դարի սկիզբ» թեման, որը կրկին ղեկավարում է Վարդան Կարապետյանը:

Քանի որ ես դեռևս Միջին դպրոցից սկսած հետաքրքրված եմ եղել թարգմանություններով, մասնավորապես Կորեայի և Ճապոնիայի վերաբերյալ, ուստի որոշեցի թարգմանությունների արդյունքում ձեռք բերած գիտելիքներս ու թարգմանչական հմտություններս օգտագործել և վերը նշված երկրների պատմությունը ներկայացնել հետազոտական աշխատանքների տեսքով: Կարծում եմ՝ հետազոտական վարժարանի շատ սովորողներին և դասավանդողներին նույնպես կհետաքրքրի այս աշխատանքը, որի միջոցով ավելի ամբողջական պատկերացում կարող են ունենալ Ճապոնիայի նոր շրջանի պատմության, մասնավորապես կայսր Մեյձիի ձեռնարկած այն փոփոխությունների մասին, որոնց արդյունքում Ճապոնիայի ժողովուրդը համախմբվեց կայսեր շուրջը, դարձավ ազգ, իսկ երկիրը՝ համաշխարհային տերություն:

Հետազոտական աշխատանքիս նպատակն է՝ Ճապոնիայի կայսր Մեյձիի օրինակով ցույց տալ, թե ինչպես կարելի է կարճ ժամանակահատվածում դառնալ հզոր պետություն: Կարևոր են համարում նշել, որ Ճապոնացիներն ուզում էին դառնալ տերություն, և սա է հանդիսանում այն մեծ պատմական դասը, որը նաև մեզ՝ հայ ժողովրդիս համար պետք է ուսանելի լինի՝ հաղթում է նա, ով ուզում է հաղթել:

Աշխատանքը կազմված է բովանդակությունից, ներածությունից, նախաբանից, հինգ գլուխներից, վերջաբանից և օգտագործված աղբյուրների ցանկից: Ներածության մեջ խոսվում է հետազոտական աշխատանքի թեմայի կարևորության և ընտրության, աշխատանքի կառուցվածքի, աշխատելու ընթացքի մասին: Նախաբանում ներկայացված է մինչ կայսր Մեյձիի կառավարման շրջանի իրադարձությունների համառոտ պատմությունը: Գլուխներում ներկայացված է Ճապոնիան՝ ըստ կոնկրետ ժամանակահատվածների: Վերջաբանում ներկայացված է աշխատանքի համառոտ ամփոփումը և կայսր Մեյձիի կարևոր դերի, նրա ձեռնարկումների և դրանց արդյունքում Ճապոնիայի առաջխաղացման, զարգացման և ձեռքբերումների մասին: Օգտագործել են հիմնականում օտարալեզու աղբյուրներ, քանի որ Ճապոնիայի մասին հայալեզու աղբյուրները գրեթե բացակայում են:

Հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ամենշաբաթյա հանդիպումներ են ունեցել աշխատանքիս ղեկավարի հետ, միասին աշխատել ենք, քննարկել այն հիմնական կետերն ու շեշտադրումները, որոնց շուրջ կառուցվել է աշխատանքը, նաև աշխատել բովանդակային և կառուցվածքային հարցերի շուրջ:

Այժմ անցնեմ բուն աշխատանքին, որը ներկայացված է ստորև:

## ՆԱԽԱԲԱՆ

Կայսրն ապրում էր Կիոտոյում: Քաղաքը հիմնադրվել է դեռևս 794թ. և կոչվում էր Հեյան՝ «խաղաղության և հանգստության մայրաքաղաք»: 12-րդ դարի վերջին այն սկսեցին կոչել պարզապես Կիոտո՝ «մայրաքաղաք»:

Հեյանի մշակութային փայլուն կյանքն ուղեկցվում էր ողջ հասարակական-քաղաքական համակարգի ճգնաժամով: Մայրաքաղաքի բնակիչներին մնացած երկրը թվում էր խուլ գավառ, որտեղ նրբագեղ մարդը չի կարող ապրել: Հեյանի արիստոկրատները ոչ մի անձանոթի թույլ չէին տալիս մտնել իրենց փակ աշխարհ:

Կանացիությունը արիստոկրատների իդեալն էր՝ պալատական տղամարդկանց հանդերձանքը հիշեցնում էր կանանց հանդերձանք, տղամարդիկ հանում էին հոնքերը, դիմափոշի քսում և սևացնում ատամները: Արիստոկրատների կյանքի հիմնական մասն անցնում էր պալատում, նրանք հազվադեպ էին դուրս գալիս այն փոքրիկ տարածության սահմաններից, որտեղ ապրում էին:

Հեյանի արիստոկրատները չէին նկատում «հասարակ ժողովրդին» և, իհարկե, չէին կարող ապահովվել երկրի միասնությունը, որը բաժանված էր բազմաթիվ մեղիքությունների: Նրանցից յուրաքանչյուրն ուներ սամուրայների իր ջոկատը: Ժամանակ առ ժամանակ շարունակական կռիվները բերում էին նրան, որ երկրում ի հայտ էր գալիս հաղթանակած տուն, որը որոշ ժամանակով կարողանում էր պահպանել հարաբերական կարգ: Այդ ժամանակ նրա ղեկավարը կայսրից ստանում էր սյոգունի՝ գեներալի, կոչում և նա ստեղծում էր իր կառավարությունը: Սկզբում դա Մինամոտոյի տունն էր, որը հաստատվեց Կամակուրայում 1185–1333թթ., հետո Աշիկագան՝ 1392-1573թթ., որը նախընտրեց Կիոտոյի Մուրոմաչի կոչվող շրջանը: 1603թ. իշխանությունն անցավ Տոկուգավա սյոգուններին: Սյոգունները չէին համարձակվում ոտնձգություն կատարել դինաստիայի հեղինակության վրա, բայց զրկեցին վարչական լիազորություններից:

Տոկուգավայի սյոգունատի հիմնադիրը՝ Իեյասուն (1542–1618թթ.), իր կենտրոնը տեղափոխեց Էդո, որտեղ գտնվում էր սյոգունների ամրոցը: Կայսրը և նրա արիստոկրատները որոշումներ կայացնելու հարցում ձայնի իրավունք չունեին:

Կիոտոյի արհեստավորները հանդես էին գալիս որպէս նորաձևության կարգադիր: Նրանց պատրաստած գործվածքները և հագուստը, կերամիկան և հովհարները, քաղցրավենիքն ու սակեն համարվում էին լավագույն նվեր:

Օսակա քաղաքի հետ մեկտեղ, որը համարվում էր «Ճապոնիայի խոհանոց», Էդոյում էին կենտրոնացած դարաշրջանի ամենաեռանդուն մարդիկ: Էդոն սկսեցին կոչել Տոտո՝ «Արևելյան մայրաքաղաք», իսկ Կիոտոն՝ Մայկյո՝ «Արևմտյան մայրաքաղաք»:

Կիոտոյի «Ճապոնիայի նորաձևության խանութ»-ի փառքը մարեց 18-րդ դարի վերջին: Էդոյից սամուրայները հավատում էին, որ իրենք ապրում երկրի լավագույն քաղաքում: Այնուամենայնիվ, Կիոտոն ուներ այն, ինչ չունեի Էդոն՝ Կայսր և հազարամյա պատմություն:

Դարեր շարունակ համարվում էր, որ կայսրի և նրա արքունիքի հիմնական պարտականությունները ծեսերի իրականացումն է: Ծեսերը կատարվում էին պաշտպանելու ողջ երկիրը աղետներից՝ երաշտից, անձրևից, թայֆունից, երկրաշարժից, հրդեհից, և ապահովելու իրենց հպատակների բարեկեցությունը: Սյոգունի և նրա շրջապատի աչքերում կայսերական արքունիքը ուներ անվերապահորեն «ծիսական իշխանություն»: Սյոգունը և կայսրը առանց միմյանց չէին կարող գոյություն ունենալ՝ սյոգունները պաշտպանում էին կայսրին, իսկ նա նրանց տրամադրում «ծիսական ծածկ»:

Սյոգունատը հեռացրեց կայսրին և նրա արքունիքը որևէ որոշում կայացնելուց, սակայն սյոգունը նշանակվում էր միայն կայսեր հրամանի հրապարակումից հետո: Տոկուգավայի սյոգունատը կարողացավ ստեղծել այնպիսի կառույց, որի շնորհիվ երկիրը երկար ժամանակ ապրեց խաղաղության մեջ, բայց հիմքը հիմնված էր այնպիսի որոշումների վրա, որոնք հանգեցրին իշխանության բուրգի փլուզմանն արտաքին աշխարհի հետ առաջին իսկ շփումից: Դա տեղի ունեցավ 19-րդ դարի կեսերին, երբ արևմտյան տերությունները սկսեցին ավելի համառ պահանջել «բացել երկիրը»:

## Գլուխ I. Ճապոնիան 1850-1860 ական թթ.

### 1852 թ.. Կայեն նշանաբանի կառավարման 5-րդ տարին: Մեյձիի կյանքի 1-ին տարին:

Կայսր Կոմեյն վարում էր չափասահուն կյանք՝ իրականացնում էր ծեսեր, որոնց ժամանակացույցը հայտնի էր տարիներ առաջ, զբաղվում էր պոեզիայով և դասական կոնֆուցիական տեքստերի ուսումնասիրությամբ:

Ուներ շատ երեխաներ, սակայն նրանք ծնվում էին հիվանդ, իսկ շատերը մահանում: Այս տարին իր հետ բերեց հաջողություն՝ հոկտեմբերի 15-ին ծնվեց ապագա կայսր Մեյձին: Նրա կայսր դառնալու համար պահանջվում էր միայն մեկ բան՝ կենդանի մնալ: Վեցերորդ օրը երեխան ստացավ իր առաջին անունը՝ Սատինոմիա՝ «Երջանիկ արքայազն»: Ճապոնիայում ընդունված էր երեխայի հաջորդ տարիքային խումբ անցնելիս տալ նոր անուն: Ուստի արքայազնը չսահմանափակվեց մեկ անունով:

### 1856 թ.. Անսեյ նշանաբանի կառավարման 3-րդ տարին: Մեյձիի կյանքի 5-րդ տարին:

Արքայազն Սատինոմիան դաստիարակվում էր հազարամյա ավանդույթների ոգով՝ նա պետք է պահպաներ իր ծագմամբ սահմանված բազմաթիվ արգելքները: Ճապոնիայում կայսերական ընտանիքի դեմքերը՝ վախենալով չար աչքից, չեն ցուցադրվել հպատակներին: Պալատից դուրս նրանք պարտավոր էին ճամփորդել բացառապես դեսպակով:

Մեյձիի կենսագիրները հաճախ նշում են, որ չափահաս կայսրին առանձնապես դուր չէր գալիս, երբ իրեն նայում էին: Պետք է հիշել, որ այդ «հակակրանքը» նրա ավանդական դաստիարակության հետևանքն էր:

### 1859 թ.. Անսեյ նշանաբանի կառավարման 6-րդ տարին: Մեյձիի կյանքի 8-րդ տարին:

Սատինոմիան սկսեց սովորել: Նրա գրչության և գեղագրության ուսուցիչն արքայազն Տակահիտոն էր (1812–1886թթ.), որի ընտանիքը հայտնի էր որպես մտավորականներ: Սատինոմիայի կրթությունը «դասական» էր՝ ուսումնասիրում էր կոնֆուցիականության կանոնները, սակայն չէր ուսումնասիրում ո՛չ բնական գիտություններ, ո՛չ աշխարհագրություն՝ պալատական պատերի հետևում թաքնված մարդուն ինչի՞ն էր պետք աշխարհագրությունը:

1860 թ.. Մենյեն նշանաբանի կառավարման 1-ին տարին: Մեյձի կյանքի 9-րդ տարին:

Ապրիլին արքայազնն անցավ իր կյանքի ցիկլի երկու կարևորագույն ծեսերը: Առաջինի ընթացքում կտրվեցին մազերի ծայրերը, ինչը խորհրդանշում էր երեխայի անցումը դեռահաս տարիք, իսկ երկրորդի ժամանակ նա մանկական պարանը փոխարինեց չափահասի գոտիյով: Երկու արարողություններն էլ Սատինոմիային գահաժառանգ հռչակելու նախերգանքներ էին: Նոր կարգավիճակն ենթադրում էր նոր անվան շնորհում և երեք անուններից, որոնք ներկայացվեցին ամենաբարձր պալատականների դատարան, ընտրվեց Մուցուհիտո՝ «խաղաղ», «բարեկամասեր», անունը:

1866 թ.. Կեյո նշանաբանի կառավարման 2-ին տարին: Մեյձի կյանքի 15-րդ տարին:

Դեկտեմբերի 25-ին Կոմեյ կայսրը մահացավ: Նրա մահով Մուցուհիտոյի կյանքում սկսվեց նոր շրջան, իսկ գահակալությամբ՝ Ճապոնիայի պատմության նոր շրջանը:

Իրավիճակը երկրում լարված էր, բայց դա չէր կարող չեղարկել նոր կայսրի գահ բարձրանալու ծեսերը: Մուցուհիտոն ընդամենը 15 տարեկան էր, և նա նույնիսկ չհասցրեց ավարտին հասցնել հասունացման ծեսը: Կոմեյ կայսր երիտասարդ Իեմոտիի պաշտմանության տակ էր: Այժմ անչափահաս Մուցուհիտոն անցավ Յոշինոբու սյոգունի պաշտպանության տակ:

Իշխանության համակարգը նախագծված էր այնպես, որ կայսրն ոչինչ չէր որոշում: Այդ իսկ պատճառով նոր կայսրի երիտասարդ տարիները ոչ մեկին չէին անհանգստացնում:

Դառնալով կայսր՝ Մուցուհիտոն շարունակեց իր կրթությունը ավանդական ոգով: Նա սովորում էր գեղագրություն և պոեզիա, կարդում էր դասական չինական տեքստեր և ուսումնասիրում պալատական ծեսերին նվիրված գրքեր:

Ճապոնիայում, ինչպես շատ այլ երկրներում, միապետը պարտավոր էր ամուսնանալ: Ընտրությունը փոքր էր: Ամռանը տեղի ունեցավ հարսնատեսություն: Հարուկոն՝ նահանգի ավագ խորհրդականի՝ Բչիջո Սանեյոշիի, կրտսեր քույրը, ժամանեց Գոշո պալատ: Հարուկոն փայլուն պոեզիա գիտեր և ինքն էլ էր պոեզիա հորինում, կարդում



չինարեն, գիտեր նվագել կոտո՝ ցիտրայի տեսակ, երգում էր, սովորում էր թեյի արարողությունն ու իկեբանան: Բացի այդ, նա աչքի էր ընկնում նախանձելի առողջությամբ: Հարուկոն բարենպաստ տպավորություն թողեց, և երկու օր անց նրան տեղեկացրին, որ այժմ նա կայսեր հարսնացուն է: Բայց հարսանիքը չէր կարող կայանալ մինչև Կոմեյի մեկամյա սգո շրջանը չավարտվեր: Նույն պատճառով չիրականացվեց երիտասարդ կայսրի չափահասության ծեսը:

Հարավարևմտյան իշխանությունների ճնշման ներքո Յոշինոբուն հրաժարական տվեց: Վերջին ինը դարերի ընթացքում սա առաջին անգամն էր, որ երկիրը մնաց առանց ռազմական կառավարչի: Երկրում սյոգուն չկար, բայց սյոգունատը դեռ գոյություն ուներ: Արքունիքն այժմ պետք է ինքը որոշեր ընթացիկ կառավարման հարցերը, սակայն որոշումներ կայացնելու և իրականացնելու մեխանիզմ դեռ չկար: Արքունիքը ոչ փող ուներ, ոչ էլ մեծ հողատարածքներ կամ գործեր: Նրա միակ հենակետը հարավարևմտյան մելիքությունների մարտիկներն էին: Նոյեմբերի վերջին Մուցուհիտոն իր կյանքում առաջին անգամ վերանայեց Սացումայի, Չոշուի, Ակիի և Տոսայի գործերը: Իր կյանքում առաջին անգամ կայսրը ձիով հայտնվեց հանրության առաջ: Դեկտեմբերի 8-ին Սացումայի, Օվարիի, Ֆուկուի, Հիրոսիմայի և Տոսայի մարտիկները փակեցին Գոշո պալատի դարպասները: Այժմ նրանք, կայլ ոչ թե սյոգունները, պատասխանատու էին Մուցուհիտոյի պաշտպանության համար:

Դեկտեմբերի 9-ին իշխանությունն ամբողջականապես անցավ կայսրին: Հրամանագրում ասվում էր, որ կայսերական իշխանության վերածնունդն իրականացվում է առաջին կայսր Ջիմուի կողմից հիմնված դարավոր սկզբունքների համաձայն:

### 1868թ.. Մեյձիի կառավարման 1-ին տարին:

1868թ. հունվարի 3-ին նոր կառավարությունը հռչակեց հրամանագիր, ըստ որի վերականգնում է կայսերական իշխանությունը: Համաձայն այդ փաստաթղթի, Տոկուգավայի սյոգունատը լուծարվում է, և պետության վերահսկողությունն անցնում է կայսրի և նրա կառավարությանը: Կառավարության նիստերում որոշվեց նախկին սյոգունին զրկել բոլոր կոչումներից, տիտղոսներից և սեփականության մեծ մասից: Ճապոնիան բաժանվեց երկու ճամբարի և սկսվեց քաղաքացիական պատերազմ:

Հունվարի վերջին նախկին սյոգունատի կողմնակիցները փորձեցին գրավել Կիոտոն և վերականգնել իրենց իշխանությունը: 1868թ. հունվարի 27-30-ին Տոբա-Ֆուշիմիի ճակատամարտում նրանք պարտություն կրեցին կայսերական կառավարության ստորադաս, բայց արդիականացված բանակի կողմից: 1868թ. մայիսի 3-ին կայսերական ուժերն՝ առանց կռվի, գրավեցին Էդոն: Յոշինոբուի կապիտուլյացիայից հետո Ճապոնիայի մեծ մասն ընդունեց կայսերական իշխանությունը:

Քաղաքացիական պատերազմի ընթացքում կայսերական կառավարությունը սահմանեց նոր քաղաքական չափանիշներ: 1868թ. փետրվարին կայսերական կառավարությունը Ճապոնիայում գտնվող օտարերկրյա ներկայացուցիչներին հայտարարեց, որ նա է երկրի նոր օրինական կառավարությունը: Պետության ղեկավար հռչակվեց կայսրը: 1868թ. ապրիլի 6-ին հրապարակեց «Հնգակետ կանոնադրության» երդումը՝ նոր կառավարության բնույթի մասին.

1. Մենք հրավիրելու ենք հանրային ժողովներ, և բոլոր հասարակական գործերը կորոշվեն հանրային կարծիքին համապատասխան:
2. Կառավարողները և կառավարվողները հավասարաչան պետք է նվիրվեն ժողովրդին ծառայելուն:
3. Զինվորական և քաղաքացիական պաշտոնյաներին, ինչպես նաև հասարակ ժողովրդին հնարավորություն կտրվի առանց դժգոհությունների կատարել իրենց պարտականությունները:
4. Անցյալի բոլոր վատ սովորույթները կվերացվեն, և ամեն ինչ կարվի արդար օրենքներով:
5. Օգտակար գիտելիքը փոխառվելու է աշխարհի բոլոր ազգերից, և այդպիսով կայսրությունը կհասնի իր բարգավաճման ամենաբարձր աստիճանին:

Երդումից հետո Մուցուհիտոն ուղերձ է հղել պետական բարձրաստիճան պաշտոնյաներին, որում նշել է. «Հին սովորույթների համաձայն, անձամբ ղեկավարելու եմ երկիրը՝ հոգալով մարդկանց մասին: Միայն այդ պայմանով երկիրը կկարողանա հաղթահարել մեկուսացման հետևանքները, հրաժարվել հնացած սովորույթներից, բարեփոխվել, վաստակել օտար երկրների հարգանքը և դառնալ

Տուջի լեռան պես հզոր: Այժմ կայսրի և ժողովրդի միջև միջնորդներ չեն լինի, ինչպես եղել են Հեյանի ժամանակաշրջանում:

Վերացվում է կառավարման բազմաստիճան համակարգը, կայսրը վերածվում է երկրի, ժողովրդի և նրա իշխանության միասնության խորհրդանիշի, առանց որի անհնար է պահպանել ինքնիշխանությունը»<sup>1</sup>:

1868 թ. սեպտեմբերին Էդո քաղաքը վերանվանվեց Տոկիո՝ Արևելյան մայրաքաղաք, իսկ հոկտեմբերին ընդունվեց կառավարության նոր կարգախոս՝ Մեյձի: Կառավարությունն որոշեց օգտագործել միայն մեկ կարգախոս մեկ միապետի կյանքի համար:

### Կրոն

Ճապոնացիներն ապրել են «երկակի հավատքի» պայմաններում: Մինտոյական սրբավայր այցելելը բոլորովին չէր հակասում բուդդայական տաճար այցելելու համար: Երեխան ի ծնե սինտոիստ էր, բայց մարդը մահանուր էր որպես բուդդիստ: Մինտոյական աստվածները համարվում էին բուդդաների և բողիսաստվածների հիպոստազներ: Դա է պատճառը, որ շատ սինտոյական սրբավայրեր պարունակում էին բուդդայական պատկերներ, իսկ բուդդայական տաճարները՝ սինտոյական մեհյաններ:

Դարերի ընթացքում բուդդայականությունն ու սինտոիզմն այնքան միաձուլվեցին, որ սինտոյական սրբավայրում Բուդդայի արձանի առկայությունը համարվում էր սովորական բան:

Բուդդայականությունն ու սինտոիզմն այնքան փոխկապակցված էին, որ կրոնական պատկանելության հարցը «միջին» ճապոնացիներին անհերթեթ թվաց: Այնուամենայնիվ, Մեյձիի կայսր դառնալուց հետո սկսվեց աշխատանք բնակչությունն սինտոյական ոգով «կրթելու» ուղղությամբ:

---

1. [А. Мещеряков «Император Мэйдзи и его Япония», էջ 151](#)

Դրա համար անհրաժեշտ էր «առանձնացնել» սինտոն բուդդայականությունից: Բուդդայականությունն միջազգային հավատք էր, իսկ իշխող վերնախավին անհրաժեշտ էր կառուցել ճապոնական ազգը, այսինքն՝ զարգացնել այնպիսի ազգային հատկություններ, որոնք ճապոնացիներին կառանձնացնեն մյուս ժողովուրդներից:

Մեկ այլ պատճառն այն էր, բուդդայականության ամենաազդեցիկ դպրոցներն սերտորեն կապված էին սյոգունատի հետ: Մինտոիզմը երբեք էական դեր չի խաղացել սյոգունատի գաղափարախոսության մեջ: Ըստ էության սինտոիզմը պիտանի չէր ազգային գաղափարախոսություն ստեղծելու համար, այնուամենայնիվ, այլընտրանք չգտնվեց:

Բուդդայական և սինտոյական պաշտամունքների տարանջատմամբ քահանաներին արգելվեց ծառայել բուդդայական տաճարներում, և նրանց բոլորին հրամայվեց աճեցնել մազեր, որպեսզի նրանք այլևս չնմանվեն բուդդայական վանականներին: Մինտո քահանաների ադետալի պակաս կար և սրբավայրերի անձնակազմը սկսեց համալրվել նախկին բուդդայական վանականներով:


\*\*\*

1868թ. ստեղծվեց նոր զինանշան: Մոլոշավարդը համարվում էր Տոկուգավա տան զինանշան, սակայն այժմ հերթը հասել է մեկ այլ ծաղկի: Ապրիլին որպես կայսերական տան զինանշան հաստատվեց 16 թերթիկանոց քրիզանթեմը, որը միաժամանակ դարձավ պետության խորհրդանիշ: Քրիզանթեմը երկարակեցության և անճկունության խորհրդանիշ էր: Մինչ այդ քրիզանթեմը օգտագործվում էր բազմաթիվ տների զինանշաններում և, նույնիսկ, բուդդայական տաճարներում, սակայն այժմ միայն կայսրն ուներ այդ զինանշանի իրավունքը: Ավելորդ է ասել, որ այդ զինանշանի պատկերներով առևտուրն արգելված էր:

«Նոր» և «բարեփոխ» բառերն այս տարվա խոսակցություններում հայտնվում էին մոլազար հաճախականությամբ: Եվ դա պատահական չէ, քանի որ երկրում տեղի էին ունենում իսկապես հեղափոխական վերափոխումներ: Դրանք սկսվեցին հենց կայսեր կերպարից: Մուցուհիտոն ստվերից դուրս եկավ լույս:

Նոր վարչակարգի գլխավոր գաղափարախոսներից մեկը կարծում էր, որ կայսրը չի կարող իրականացնել իր նախորոշումը՝ լինել «Ժողովրդի հայր և մայր», Կիոտոյում, և միայն մայրաքաղաքի տեղափոխումը կարող է փոխել իրավիճակը: «Երկու մայրաքաղաքների»՝ Կիոտոյի և Էդոյի, նախագիծը մեծ աջակցում ստացավ: Մի մայրաքաղաքը Տոկիոն է՝ Արևելքի մայրաքաղաք, իսկ մյուսը՝ Կիոտոն՝ Արևմուտքի մայրաքաղաք: Արդյունքում ընտրությունը կատարվեց հոգուտ Էդոյի, քանի որ այն ամենամեծ քաղաքն էր:

Որպես առաջին փորձ՝ Մեյձին պետք է Կիոտոյից Տոկիո մեկնեք, որպեսզի «վերնի և ներքևի» միջև անհաղթահարելի չեղքում չլինեք: Մեյձիի Տոկիո մեկնելու պաշտոնական պատճառն այն էր, որ հոգ տանեք երկրի արևելյան շրջանի մարդկանց մասին, ովքեր տուժել են պատերազմի պատճառով: Պետք էր մարդկանց հստակ ցույց տալ, որ երկիրը նոր ու հզոր ղեկավար ունի:



Ճապոնիայի ողջ պատմության ընթացքում ոչ մի կայսր այսքան երկար ճանապարհ չի անցել: Ճանապարհորդությունը տևեց 23 օր և հոկտեմբերի 13-ին Մեյձին հասավ Տոկիո:

Տոկիոն մեծ տպավորություն թողեց Մեյձիի վրա իր հսկայական չափերով: Ճիշտ այնպես, ինչպես այդգունի ամրոցը, որը շատ ավելի մեծ էր, քան նրա պալատը Կիոտոյում:



Անցնելով այդ ճանապարհը նա կապեց դրանք, կարծես թե, կախարդական թելով: Վերադառնալով Կիոտո Մեյձին ամուսնացավ Հարուկոյի հետ:

Երկիրն ապրում էր ոչ միայն «մեծ» քաղաքականությամբ: Այս տարի Յոկոհամայում վաճառքի հանվեց պաղպաղակ, որը դարձավ արևմտյան քաղաքակրթության կողմից բերած «բարիքների» խորհրդանիշերից մեկը:

## **Գլուխ II. Ճապոնիան 1870-ականներին**

### 1870թ.. Մեյձիի կառավարման 3-րդ տարին:

Ճապոնական առևտրային նավերը սկսեցին նավարկել այն դրոշի ներքո, որը պաշտոնապես դարձավ պետական՝ կարմիր շրջան սպիտակ հիմնագույնի վրա: Սպիտակի և կարմիրի համադրությունը սինտոիզմում հաջողակ էր համարվում՝ կարմիրը կրակի և արևի մաքրող էներգիան է, իսկ սպիտակը՝ մաքրություն: Շրջանը խորհրդանշում էր արև, և, հետևաբար, Ամատերասու աստվածուհուն և նրա «ուղիղ հետնորդուն»՝ կայսր Մեյձիին: Որոշումը միանգամայն բնական էր, քանի որ 8-րդ դարից պետությունն անվանվում էր Նիհոն՝ Արևածագի երկիր: Մինչ Մեյձիի գահակալությունը Ճապոնիան չունեի ազգային խորհրդանիշ, բայց հիմա սկսվեց

Ճապոնական դրոշի հաղթական երթը ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտերկրում:

Կյանքի ռիթմն արագացավ: Անիվը դարձավ քաղաքակրթության խորհրդանիշ: Նախկինում ճապոնացիները քիչ էին օգտագործում անիվ: Կարելի է հիշել միայն Հեյանի արիստոկրատների անդյուրաշարժ երկանիվ սայլակները, որոնք քաշում էր անշտապ եզր: Տոկիոյի բնակիչ Իգումի Յոսուկեի առաջարկը՝ ճապոնացուն եվրոպական կառք լծել, թվում էր տրամաբանական: Նա արտոնագիր ստացավ և 1870թ. դարձավ ռիկշա: 1872թ. Տոկիոյում կար 50 հազար ռիկշա: Պարզվեց, որ դրանք շատ ավելի շարժունակ են և էժան, քան ձիաքարշերը: Այժմ «տաքսիներից» կարող էին օգտվել նաև համեմատաբար աղքատ մարդիկ:

Օգոստոսին Յոկոհամայում սկսեց հրատարակվել առաջին օրաթերթը՝ «Յոկոհամա Մայնիչին»:

#### 1871թ.. Մեյձիի կառավարման 4-րդ տարին:

Նոր կառավարությունը ձգտում էր նրան, որ Ճապոնիան արագորեն ճանաչվի որպես «քաղաքակիրթ» երկիր: Քաղաքակրթության ցուցանիշներից մեկը դա ժամանակակից քրեական օրենսգիրքն էր: Կառավարությունը հույս ուներ, որ օրենսգրքի ընդունումից հետո Անգլիան և Ֆրանսիան դուրս կբերեն իրենց գորքերը Յոկոհամայից:

Այս տարին կարելի է շրջադարձային համարել նոր Ճապոնիայի կառուցման գործում՝ պետությունը լիակատար իրավունք ստացավ տնօրինելու հողերը և իշխանական ձեռնարկությունները՝ հանքերը, գործարանները, նավաշինարանները:

Մեպտեմբերին Մեյձին հրամանագիր արձակեց, որտեղ ասվում էր, որ պալատական ավանդական զգեստը «թուլության» տպավորություն է թողնում: Նա խրախուսում էր իր ենթականերին արտասահմանյան ոճով հագնվել: Հագուստի և սանրվածքի սահմանափակումների վերացումը նշանակում էր գիտակցության հեղափոխություն: Այժմ նույնիսկ գյուղացիները կարող էին մետաքսյա հագուստ հագնել, ինչը նախկինում նրանց խստիվ արգելված էր: Մամուրայներին թույլ տվեցին հրաժարվել սափրած ճակատից և հյուսից: «Մազահարդարման բարեփոխումը» չազդեց միայն

բուդդայական վանականների վրա, որոնք շարունակում էին սափրել իրենց գլուխները:

Կառավարությունը որոշեց, որ ֆրակը և գլանագլխարկը պարտադիր «համազգեստ» են պաշտոնյաները համար ամանորյա այցելությունների ժամանակ: Աշխատանքային օրերին այժմ անհրաժեշտ էր եվրոպական հագուստ կրել:

Նոր կառավարություն՝ նոր փող: Մայիսին իենը մտավ շրջանառության մեջ:

Ճապոնացիները սովոր էին գրքերի միջոցով իմանալ արտաքին աշխարհի մասին: Քիչ ճանապարհորդելով նրանք, այնուամենայնիվ, շատ լավ գիտեին չինացի դասականներին: Ժամանակն էր գրքերի միջոցով ճանաչել Արևմուտքը: Երկրում սկսեցին հրատարակվել թարգմանություններ արևմտյան լեզուներից: Մեյձիի օրոք ձևակերպվեց «Ճապոնական ոգի, արևմտյան գիտելիք» վարդապետությունը:

#### 1872թ.. Մեյձիի կառավարման 5-րդ տարին:

Փետրվարի կեսերին իսկապես պատմական իրադարձություն տեղի ունեցավ՝ հողերի առքուվաճառքի դարավոր արգելքը հանվեց: Ճապոնիայի պատմության մեջ առաջին անգամ գյուղացին ստացավ իրավունք լինել այն հողի սեփականատերը, որը միշտ մշակել է: Այժմ երկրում ամեն ինչ գնվում ու վաճառվում էր: Այնուամենայնիվ, օտարերկրացիներին դեռ թույլ չէին տալիս հող ունենալ:

Պարզվեց, որ հողի մասնավոր սեփականության ներդրումն ավելի հեշտ էր, քան կրոնական անհանդուրժողականության հետ գործ ունենալը: Փետրվարի սկզբին Ճապոնիայի հյուսիս-արևելքում՝ Մենդայի շրջանում, ուղղափառության ութ ճապոնացի հետևորդներ բանտարկվեցին: Այնուհետև հալածանքներ սկսվեցին Հակոդատեում: Եվրոպական երկրներից սկսվեցին կշտամբանքներ: Կառավարությունը ստիպված վերացրեց քրիստոնեության արգելքը: Միսիոներների՝ բողոքականների և կաթոլիկների, հոսք ներթափանցեց երկիր և այժմ Ճապոնիան կարող էր հպարտանալ, որ դարձել է ավելի քաղաքակիրթ ու ժամանակակից:

«Արդիականությունը» սահմանափակ էր: Հոնքերը սափրելու և ատամները սևացնելու սովորույթն արագորեն մոռացության մատնվեց: Բայց երբ Տոկիոյի փողոցներում սկսեցին հայտնվել կարճ մազերով կանայք, քաղաքապետարանն արգելեց դա: Նման



սանրվածքի համար մարդիկ տուգանվում էին: Մեյձիի վերափոխումներն իրականացվել են բացառապես տղամարդկանց համար, և նրանց արտաքին տեսքն արագ փոխակերպվեց: Բայց այդ նույն տղամարդիկ այնքան էլ չէին ողջունում կանանց փոփոխությունները: Ըստ նրանց կինը պետք է պահպաներ տունն ու ավանդույթները:


Այսպես կոչված «զարգացող երկրներում» կրթության կառուցումը, սովորաբար, սկսվում է ամենաբարձր մակարդակից՝ համալսարաններից: Ճապոնացի ղեկավարներն այլ կերպ էին մտածում: Նրանք հիմնական շեշտը դրեցին տարրական կրթության վրա: Նախատեսվում էր բացել ութ բուհ և ավելի քան 53.760 դպրոց, այնպես որ յուրաքանչյուր 600 աշակերտի համար մեկ դպրոց լիներ: Նույնիսկ առանց պարտադիր կրթության ներդրման, Ճապոնիան շատ կրթված երկիր էր: Սակայն, այժմ փոխվեց հասկացությունը, թե ինչ է պետք սովորեցնել:

Մկզբում ոչ բոլորն էին հիացած տարրական կրթության ներդրմամբ: Շատ գյուղացիներ դժգոհ էին, որ իրենց երեխաները պետք է գնան դպրոց, այլ ոչ թե օգնեն ծնողներին դաշտերում: Նույնիսկ լուրջ անհանգստություններ եղան և գյուղացիները այրեցին դպրոցները: Այնուամենայնիվ, Մեյձիի հպատակների ճնշող մեծամասնությունը կարծում էր, որ կրթությունը բարիք է:



Բացի կրթական նպատակներից, դպրոցի առաջ դրված էին համազգային նշանակության այլ խնդիրներ: Իշխող վերնախավը զբաղված էր ճապոնական ազգի կառուցմամբ: Դրա հիմնական պայմաններից մեկը կայանում էր նրանում, որ ողջ ժողովրդի համար ստեղծվի գիտելիքի և հիշողության միասնական ֆոնդ: Երկրի բոլոր մարդիկ պետք է կարողանան խոսել նույն լեզվով, իմանան նույն փաստերը և ունենան նույն արժեքները:

Կառավարությունը հասկանում էր, որ առանց տրանսպորտային ենթակառուցվածքների արդիականացումը հնարավոր չէ: Հունիսին Տոկիոյում ստեղծվեց «Ցամաքային բեռնափոխադրումների» ընկերություն: Մեյձիի ճապոնիայում տրանսպորտի բոլոր տեսակները սկսեցին զարգանալ անմիջապես և միաժամանակ՝ անիվային, ծովային, գետային և երկաթուղային: Այս տարի շահագործման հանձնվեց առաջին երկաթուղային գիծը: Այդ նախագիծը ծառայեց ցույց տալու, թե ինչ բարիքներ ունի եվրոպական քաղաքակրթությունը:



Այս տարի բացվեց ոչ միայն պետական երկաթուղին, այլ նաև Տոմիոկայում գտնվող մետաքսե պետական գործարանը և առաջին հեռագրային գիծը:

Ճապոնիային անհրաժեշտ էր տարադրամ, քանի որ մետաքսը նորաձև էր Եվրոպայում և Ամերիկայում: Տոմիոկա գործարանը ծառայեց որպես ուղենիշ արագ

զարգացող թեթև արդյունաբերության համար՝ դառնալով առաջընթացի խորհրդանիշերից մեկը:

Ճապոնիայում ժամացույց գրեթե ոչ ոք չուներ: Հատակական ժամացույցներն այնքան թանկ էին, որ դրանք կոչվում էին «իշխանական ժամացույցներ»: Ժամացույցներ սկսեցին տեղադրվել հաստատություններում, դպրոցներում, բանկերում և քաղաքային շենքերում: Բայց պարզվեց, որ դա բավարար չէ: Նպատակն այն էր, որ բոլորն ունենան ժամացույց: Այսպիսով, ժամացույցների վաճառքը երկրում թափ էր հավաքում: Ժամացույցները դարձան գրեթե առաջին արևմտյան երկարակյաց իրը, որն իսկապես լայն տարածում գտավ Ճապոնիայում:

Արեգակնային օրացույցի անցումը համարվում էր ոչ միայն գործնական, այլև գաղափարական: Նոր օրացույցի նպատակն էր կայանում էր նրանում, որ ապահովվեր երկրի զարգացումը և մուտքը «քաղաքակիրթ» երկրների ընտանիք: Այն ժամանակ ոչ ոք չէր մտածում, որ Ճապոնիան նույնպես կարող է քաղաքակրթության ցուցանիշ լինել:

Արևային օրացույցը գործի դրվեց: Միննույն ժամանակ պահպանեցին ժամանակագրությունն ըստ կառավարման նշանաբանների: Երկրի ներսում շարունակվում էր տարիների հին հաշվարկն ըստ Մեյձիի կառավարման նշանաբանի: Դա ոչ միայն հարգանքի տուրք էր ավանդույթին, այլ նաև հին համոզմունքին, որ իշխանության համար սեփական նշանաբանների առկայությունը երկրի անկախության նշան է: Չինաստանից կախված երկիրը, օրինակ՝ Կորեան, ապրում էր չինական կայսրերի կառավարման նշանաբաններով: Եթե Ճապոնիան անցներ եվրոպական՝ քրիստոնեական, տարիների հաշվարկին, շատերի համար դա կնշանակեր, որ երկիրը կորցրեց իր անկախությունը:

Նոր օրացույցի ընդունման պատմությունը շատ հատկանշական է Մեյձիի կառավարության ռազմավարությանը: Այդ ռազմավարության համաձայն՝ յուրաքանչյուր նորարարություն պետք է հավասարակշռված լինի ավանդույթի տարրով: Ավանդույթներ, որոնք կարող էին լինել ինչպես իրական, այնպես էլ հորինված: Նախկինում «Կայսրության հիմնադրման» տարիների հաշվարկը ընդունված չէր Ճապոնիայում:

### 1873թ. Մեյձիի կառավարման 6-րդ տարին:

Այս տարին տհաճ նորամուծություններ բերեց ճապոնացի երիտասարդներին: Ամանորյա տոներից հետո՝ հունվարի 10-ին, հայտարարվեց զինվորական ծառայության ներդրման մասին: Ջորակոչի էին ենթակա քսան տարին լրացած երիտասարդները: Ծառայության ժամկետը որոշվեց երեք տարի: Ջորակոչից կարող էին խուսափել պետական ծառայողները, պետական ուսումնական հաստատությունների ուսանողները, ընտանիքի գլուխը և ընտանիքի միակ որդին: Կարելի էր նաև վճարել և ազատվել ծառայությունից, սակայն գումարը հսկայական էր՝ 270 իեն: Քչերը նախընտրեցին վճարել: Երիտասարդներն իրենց անդամահատում էին, ստանում՝ գնում, անաշխատունակության կամ ծնողների անաշխատունակության վկայական, անում էին ամեն ինչ, որ կեղծվի ընտանեկան ցուցակը՝ ապագա զինվորի սխալ տարեթիվ էին հայտնում իշխանություններին: Սկզբում երիտասարդների 80–90 տոկոսին հաջողվեց այս կամ այն կերպ խուսափել զորակոչից: Ավելին, հաջորդ մի քանի տարիների ընթացքում խուսափողների թիվը միայն ավելացավ:

Բարեփոխումն ուներ նաև ռազմավարական նպատակներ: Բանակում անգրագետ զինվորների համար կազմակերպվում էին դպրոցական պարապմունքներ, տարբեր պրեֆեկտուրաների երիտասարդները ծառայության ընթացքում շփվում էին միմյանց հետ: Նրանց միավորում էր մեկ նպատակ՝ կայսեր պաշտպանությունը: Հույս կար, որ այս ընդհանուր նպատակը կօգնի ստեղծել նոր միավոր՝ «ճապոնական ժողովուրդ»: Ապագան ցույց կտա, որ դա ճիշտ հաշվարկ էր:

Նախկին սամուրայներից շատերը հետագայում դարձան նոր բանակի և ոստիկանության սպաներ, բայց սկզբում սամուրայները ցնցակաթված էին, քանի որ նրանք իրենց արժանապատվությունից ցածր էին համարում «ռամիկների» հետ ծառայելը:

Մարտի 14-ին որոշվեց արքունիքում դադարեցնել բուդոյայական ծեսերը: Նոր պայմաններում գոյության իրավունք ունեին միայն սինտոյական ծեսերը: Կառավարությունն արգելեց բուդոյայական հուղարկավորությունները: Այժմ Մեյձիի բոլոր հպատակներին հրամայվեց ավարտել իրենց երկրային

ճանապարհորդությունը գետնի մեջ: Եվ դա չնայած այն բանին, որ ճապոնացիների ճնշող մեծամասնությունը նախընտրում էր բուդդայական դիակիզումը:

Իշխանությունը վախենում էր հուզումներից, բայց կային բազմաթիվ «նախաձեռնող» առաջնորդներ, ովքեր յուրովի էին մեկնաբանում կառավարության տրամադրությունները: Նրանք այրում էին տաճարներն ու սուտրաները, ոչնչացնում բուդդայական արձանները: Աչք փակելով ավերածությունների վրա՝ կառավարությունը ջանքեր գործադրեց սինտոիզմին ճիշտ և օգտակար ուղղության համար:

Այս տարին շատ կարևոր էր նոր արտաքին քաղաքականության սկզբունքների մշակման տեսանկյունից: Եթե Տոկուգավայի սյոգունատի օրոք ճապոնիան ամեն ինչ անում էր հարևանների հետ հակամարտություններից խուսափելու համար, ապա այժմ նա ցանկություն դրսևորեց դառնալ Հեռավոր Արևելքի հեգեմոն: Հիմնական թիրախը Կորեան էր:

Ճապոնիայի և Կորեայի միջև հարաբերությունների պատմությունը գալիս է դարերի խորքից: Բավական է ասել, որ հին կորեացիները ճապոնացիների ամենամոտ ազգականներն են: Նրանց զանգվածային գաղթը սկսվեց ք.ա. 3-րդ դարից: Հենց նրանք ճապոնական կղզիներ բերեցին բրնձի մշակման և մետաղի արտադրության տեխնոլոգիաները: Մոտ 6-րդ դարում, անկախ պետության ձևավորումից հետո, ճապոնիան՝ Յամատոն, սկսեց Կորեան համարել իր հարկատու: Ճապոնական ջոկատները բազմիցս գրոհել են Կորեական թերակղզին: Այնուամենայնիվ, ճապոնիան այդքան ուժ չունեց, որպեսզի ստիպեր Կորեային կանոնավոր տուրք վճարել՝ մրցակցությունը Չինաստանի հետ էր, որը ցանկանում էր նույնը և չափազանց ուժեղ էր: 8-րդ դարում ճապոնիան երկու անգամ մտադրվեց գորք ուղարկել Կորեական թերակղզին նվաճելու համար, բայց այդպես էլ չիրականացրեց դա: Այդ ժամանակից ի վեր ճապոնական քաղաքական վերնախավի մոտ ձևավորվեց ամուր համոզմունք, որ Կորեան պետք է պատկանի ճապոնիային:

Կորեայի նկատմամբ վճռական գործողություններ անհրաժեշտ էին «ազգը միավորելու» համար: Ազգ, որպես այդպիսին, դեռ չկար, բայց ցանկություն կար ստեղծելու: Եվ այդ նպատակին հասնելու համար պատերազմից լավ բան չկար:

Ճապոնիան փորձեց Կորեայի հետ անել նույնը, ինչ արեցին նրա հետ եվրոպացիները՝ բացել երկիրը և նրա հետ «նորմալ» հարաբերություններ հաստատել: Նորմալ Ճապոնիայի տեսանկյունից՝ Կորեան այսուհետ պետք է տուրք տա Ճապոնիան: Սակայն Կորեան հրաժարվեց դրանից՝ նախընտրելով Չինաստանի հետ պահպանել հարաբերությունները: Օդը լի էր պատերազմական ոգով, բայց Ճապոնիան դեռ այն վիճակում չէր, որ հաղթական պատերազմ վարեր:

Օգոստոսի 20-ին Ճապոնիայի Առաջին ազգային բանկը նոր թղթադրամներ մտցրեց շրջանառություն :



Քանի որ Մեյձիի առաջին լուսանկարը անհաջող էր, հաջորդ ֆոտոսեսիան կազմակերպվեց 1873թ. հոկտեմբերի 8-ին: Կայսրի ավելի քան 70 լուսանկար է արվել, որոնց ճակատագիրն անհայտ է: Ամենայն հավանականությամբ, դրանք ոչնչացվել են՝ Ճապոնիան պետք է ունենա միայն մեկ կայսր, և նա պետք է ունենա միայն մեկ պատկեր:

Այդ լուսանկարը կարելի է համարել դարաշրջանային իրադարձություն Ճապոնիայի պատմության մեջ: Սակայն,

պետք չէ կարծել, որ Մեյձիի լուսանկարը զարդարեց յուրաքանչյուր ճապոնացու տունը: Կայսրի լուսանկար ունենալը ընկալվում էր որպես արտոնություն, նկարի միջոցով մատնանշվում էր նրա տիրոջ սոցիալական դիրքը և հաշվարկվում այն հեռավորությունը, որը մարդուն բաժանում էր միապետից: Իսկ արտոնությունը չի վաճառվում:

Այս տարի Տոկիոյում կառուցվեց առաջին հանրային այգին: Ինչպես բոլոր լավ բաները, այնպես էլ այգին մարդկանց գիտակցության մեջ պետք է ասոցացվեր Մեյձիի հետ:

Երկիրը փոխվում էր չտեսնված արագությամբ: Մայիսին հեռագրային գիծ բացվեց Յոկոհամայի և Նագասակիի միջև:

Խոշոր քաղաքներում՝ Յոկոհամայում, Օսակայում, Կոբեում, կառուցվեցին աղյուսե շենքեր: Սակայն փոխակերպման կենտրոնը Տոկիոն էր: 1873թ. վերջին Գինգան կառուցապատվեց երկհարկանի աղյուսե տներով՝ սյուներով և պատշգամբներով: Այն ժամանակվա ճապոնացիների գիտակցության մեջ Գինգայի շենքերը հիշեցնում էին Լոնդոնը, իսկ սալահատակ ու մայթերը՝ Փարիզ:



#### 1874թ.. Մեյձիի կառավարման 7-րդ տարին:

Բարեփոխիչները ֆանտաստիկ ակտիվություն էին ցուցաբերում: Սակայն կառավարությունը հրաժարվեց ներխուժել Կոբեա: Նրա գործողություններից դժգոհությունը մեծ էր:

Կոչը հրապարակվեց «Նիշին Շինջիշի»՝ «Օրվա լուրեր», թերթում: Դա անհավանական քաղաքական տեխնոլոգիական նորամուծություն էր: Վերնախավի ներքին վեճը դարձավ հանրությանը հայտնի: Մամուլը վճռականորեն ներգրավվեց քաղաքական պայքարի մեջ:

Դա տհաճ նորություն էր կառավարության համար: Այն չի դիտարկել թերթերը որպես տեղեկատվության աղբյուր: 1871թ. գործող մամուլի օրենքում ասվում էր, որ թերթերի նպատակն է աջակցել պետության կառավարմանը, այլ ոչ թե հակակառավարական հռչակագրեր տպել:

Գործող իշխանության նկատմամբ դժգոհությունն աճում էր:

Բարեփոխումները ցավոտ էին, առանց սամուրայների աջակցության հնարավոր չէր հանգստացնել դժգոհներին: Ռազմական արշավը դեպի Կորեա չկայացավ, և որպես մխիթարություն «բազեներին» առաջարկվեց ավելի հեշտ տարբերակ՝ Ֆորմոզա՝ Թայվան:

Փոքրիկ Ռյուկյու թագավորության դրությունը միշտ անկայուն էր: Մի կողմից Ռյուկյուի թագավորը՝ վանը, տուրք էր տալիս չինական կայսրին, մյուս կողմից, սկսած 17-րդ դարից, այն դարձել էր Սացումա իշխանության, բայց ոչ Էդոյի կենտրոնական իշխանության, հարկատու: Ե՛վ Չինաստանի, և՛ Ճապոնիայի համար արշիպելագի բնակիչները ներկայացված էին որպես «բարբարոսներ», որոնք ենթակա են «քաղաքակրթական» ազդեցության:

Տոկիոյի կառավարությունը հակված էր ռազմական միջամտություն կատարել Թայվանում՝ Ռյուկյուի բնակիչները պետք է հայտարարվեին Մեյձիի լիիրավ հպատակներ: 1872 թ. սեպտեմբերին Ռյուկյուն հռչակվեց «իշխանություն»՝ հանելով արշիպելագը Կագոսիմայի վերահսկողությունից և թագավորին զրկելով օտար երկրների հետ շփվելու իրավունքից:

Մայիսի 7-ին առաջատար ջոկատը հասավ կղզու հարավ: Թայվանում իրոք «տեր» չկար: Ոչ մի դիմադրության չհանդիպելով՝ ճապոնացիները գրավեցին հենակետերը: Թայվանում չինական զորքեր չկային: Չինացի պաշտոնյաները Թայվանը գրավելու ծրագրերի մասին իմացան Պեկինում՝ բրիտանական դեսպանորդից:

### 1875թ.. Մեյձիի կառավարման 8-րդ տարին:

Համաձայն 1867թ. միջանկյալ պայմանավորվածությունների, Սախալին կղզին Ճապոնիային և Ռուսաստանին համատեղ տիրապետության տակ էր: Դա բազմաթիվ



դիվանագիտական անհարմարություններ առաջացրեց, և հակամարտություններ ծագեցին կղզու ռուս և ճապոնացի բնակիչների միջև: Կղզում ավելի շատ էին ռուսները, քան ճապոնացիք: Բացի այդ, ճապոնական տնտեսության համար այն ժամանակ Հոկայդոյի զարգացումն ավելի առաջնային էր, իսկ դիվանագիտության համար՝ կորեական ուղղությունը: Եվ այստեղ ճապոնիայի կառավարության համար կարևոր էր Ռուսաստանի չեզոքությունը: Ուստի, Տոկիոն որոշեց Կուրիլյան կղզիների դիմաց Սախալինը տալ Ռուսաստանին: Մայիսի 7-ին՝ ապրիլի 25-ին, Սանկտ Պետերբուրգում ստորագրվեց պայմանագիր: Երկու երկրներում էլ կային մարդիկ, ովքեր համարում էին, որ համաձայնագիրը հակասում էին ազգային շահերին:

Այս տարի գրաքննությունը որոշիչ բեկում մտցրեց: Մամուլի մասին օրենքը վերանայվեց և լրացվեց զրպարտության մասին օրենքով: Մամուլի նոր կանոնները մշակվել են գերմանական օրենսդրության հիման վրա: Գերմանիան միշտ լավ օրինակ է ծառայել ճապոնիայի համար, երբ խոսքը վերաբերվում էր ազատության սահմանափակմանը:

Այժմ թերթ հրատարակելու համար պահանջվում էր Ներքին գործերի նախարարության թույլտվություն: Զրպարտության մասին օրենքը նախատեսում էր տուգանք, եթե հրապարակումը վնասում էր այնտեղ նշված անձի հեղինակությունը, նույնիսկ եթե թերթի հաղորդած փաստերը ճիշտ էին: Ճապոնացիների համար ամօրը «լավ» վարքի ամենաուժեղ խթաններից մեկն էր: Մեղքը սարսափելի էր, քանի որ այլ մարդիկ կարող էին իմանալ դրա մասին:

Մայիսին կառավարությունը վերացրեց դիակիզման արգելքը: Դրա համար մի քանի պատճառ կար: Առաջին պատճառն այն էր, որ դիակի այրման ծեսն ուներ չափազանց խորը ավանդույթներ, որոնք դժվար էր կոտրել: Երկրորդը՝ գերեզմանոցների տարածքը սկսեց արագ ընդլայնվել, և երրորդը՝ նույնիսկ «քաղաքակիրթ արևմուտքում» սկսեցին ավելի շատ դիակիզարաններ կառուցել:

### [1876թ.. Մեյձիի կառավարման 9-րդ տարին:](#)

Փոխվում էր ամեն ինչ, փոխվեց ինքնին կյանքի ուղի: Եթե նախկինում, չնայած արևային օրացույցի ներդրմանը, աշխատակիցները պետք է հանգստանային տասը

օրը մեկ, ապա այս տարվա ապրիլից քրիստոնեական շաբաթը դարձավ ժամանակավոր ձևաչափ՝ այժմ սահմանվում էր հանգստանալ կիրակի օրերին:

Եվրոպական սերը ենթադրում է փոխադարձություն և հավասարություն, ինչը ճապոնացիներին աներևակայելի էր թվում: Նման սերը քմահաճ է, այն «բնական» չէ, այն պետք է վաստակել: Կոնֆուցիականությունը մաքրված էր այդպիսի անվստահելի, զգացմունքային և քմահաճ բաղադրիչից: Երեխաները պետք է հնազանդվեն իրենց ծնողներին ոչ թե որովհետև «սիրում» են նրանց, այլ միայն այն պատճառով, որ նրանք պետք է ենթարկվեն նրանց, քանի որ ունեն հավերժական զավակների կարգավիճակ: Ճապոնական մշակույթում սերունդների միջև կոնֆլիկտ չկար: Ուստի ճապոնական հասարակությունն ավելի կայուն էր: Ծնողները ավելի լավ գիտեն, թե ինչն է լավ, ինչը՝ վատ: Ուստի, իշխանությունը ոչ միայն իրավունք ունի, այլ պարզապես պարտավոր է կրթել իր «երեխաներին»՝ ընդունել օրենքներ և վերահսկել դրանց կատարումը: Այս օրենքները խստորեն կարգավորում էին «երեխաների» պահվածքը հասարակական վայրերում՝ սկսեցին տուգանքներ գանձել հասարակական կարգի և պարկեշտության խախտման համար՝ փողոցում մերկ կամ կիսամերկ լինելու համար; դաջվածքներ անալու համար; տղամարդիկ և կանայք միասին լոգանք չէին կարող ընդունել; չէր կարելի կանացի հագուստ կրել տղամարդկանց և հակառակը՝ բացառությամբ դերասանների; չէր կարելի կռվել և վիճել; ունենալ կանացի սանրվածք և այլն: Ամբողջ երկրում պայքար էր ընթանում անցյալի «վատ» սովորությունների և «նախապաշարումների» դեմ: Արգելվում էր նաև գուշակների և փողոցային դերասանների մասնագիտությունները: Արգելվում էր կանանց ներկայությունը տաճարներում: Այժմ շատ բան չէր կարելի:

Նախկին սամուրայների համար անկախ բիզնեսն այնքան էլ հեշտ չէր, ուստի նրանցից շատերը նախընտրեցին պետական ծառայություն: Ոստիկանության և բանակի սպայական կորպուսի հիմքը նախկին սամուրայներն էին: Շնորհիվ այն բանի, որ սամուրայները ամենակրթված խավն են, նրանց զգալի մասը տեղ գտավ «մտավորական» մասնագիտություններում՝ ուսուցիչներ, գիտնականներ, բժիշկներ: Վարչական աշխատակազմի պաշտոնների ճնշող մեծամասնությունը նույնպես զբաղեցնում էին նախկին սամուրայները:

### 1877թ.. Մեյձիի կառավարման 10-րդ տարին:

Մեյձիին դեռ երկար տարիների կառավարում էր սպասվում, բայց արդեն այդ ժամանակ նա զբաղված էր իր թագավորության պատմությամբ և Պատմագիտական պալատին հրամայեց ստեղծել նոր ավարտված քաղաքացիական պատերազմի մասին պատմություն:

Երկիրը շարունակում էր ապրել և աշխատել: Այն արագությունը, որով Ճապոնիան ներմուծեց արևմտյան տեխնոլոգիաների վերջին ձեռքբերումները զարմանալի էր: Այս տարի Ճապոնիա եկավ Ալեքսանդր Բելլը, ով անցյալ տարի ստեղծեց ամենամեծ գյուտը՝ հեռախոսը: Նա փորձարկեց իր սարքավորումների աշխատանքը Տոկիո-Յոկոհամա գծում: Միաժամանակ սկսվեց հեծանիվների ներմուծումը: Ճապոնացիներից շատերը չէին կարող դրանք գնել, ուստի նրանք չէին գնում, այլ վարձակալում էին:

Մայրաքաղաքում հիմնադրվեց Տոկիոյի համալսարանը: Այն ուներ չորս բաժին՝ իրավաբանական, բանասիրական, բնագիտական և բժշկական: Համալսարանի նպատակն էր պատրաստել մասնագետներ, ովքեր յուրացրել են արևմտյան գիտությունը և ճապոնական մշակույթի ավանդական արժեքները:

Հոկտեմբերին Տոկիոյում ստեղծվեց ևս մեկ ուսումնական հաստատություն՝ Գակուշուինի փակ դպրոցը: Այնտեղ սովորում էին արքայազների ու արիստոկրատների զավակները: Երկիրը հպարտանում էր իր բացությամբ, բայց վերնախավը կարծում էր, որ իրենց երեխաները պետք է ավելի քիչ շփվեն սովորական մարդկանց հետ:

Այս տարվա ուշագրավ իրադարձություններից էր Առաջին արդյունաբերական ցուցահանդեսի բացումը: Ցուցահանդեսը բացվեց Տոկիոյի այգում և տևեց 102 օր: Մեյձին նույնպես մասնակցել է բացման արարողությանը:

### 1878թ.. Մեյձիի կառավարման 11-րդ տարին:

Հունիսին բացվեց ռազմածովային դպրոց: Նավատորմը դարձավ այն ուժի խորհրդանիշերից մեկը, որին ձգտում էր երկիրը:

Չնայած բոլոր թերություններին ու դժվարություններին, երկիրը կրթելու ջանքերն արդյունք տվեցին: Սովորում էին ն՛ մեծերը, ն՛ երեխաները: Բոլոր եվրոպացի ճանապարհորդները միաձայն նշում էին, որ Ճապոնիայում դպրոցական աշխատանքը գերազանց է: Երկրում արդեն կար 20 հազար դպրոց, որտեղ սովորում էր երեխաների ավելի քան 40 տոկոսը:

Ճապոնացի արվեստագետները նույնպես շարունակում էին «Եվրոպայի նվաճումը»: Այս տարի լույս տեսավ Հոկուսայի նկարների վերջին՝ տասնհինգերորդ, համարը «Մանգա» շարքից: Առաջին համարը վաճառքի է հանվել դեռ 1814թ., բայց այն ժամանակ Արևմուտքում ոչ ոք չգիտեր նկարչի անունը:

Ճապոնական մետաքսը շարունակում էր իր հաղթական ճանապարհը դեպի Արևմուտք: Մետաքսի և այլ ապրանքների որակի բարելավմանը նպաստեց իշխանության անմիջական մասնակցությունն անցկացվող փակ տոնավաճառում, որն առաջին անգամ բացվեց այս տարի Տոկիոյում: Տոնավաճառները դարձան ապագա հանրախանութների նախատիպ:

### 1879թ.. Մեյձիի կառավարման 12-րդ տարին:

Այս տարվա սկզբին Ճապոնիայի կառավարությունը Ռյուկյուի թագավորից՝ Սյոթայից (1843–1901թթ.), պահանջեց դադարեցնել Չինաստանի հետ հարկատու հարաբերությունները: Սակայն թագավորը չհնազանդվեց: Ռյուկյուի հետ կապված իրավիճակն արագ զարգացավ: Նախկինում հրաժարվելով հարվածել Կորեային, այս անգամ Ճապոնիայի կառավարությունը գործեց հազվադեպ միաձայնությամբ: Հունվարի 25-ին Ռյուկյուի թագավորին ուղերձ կարդացվեց ճանաչելու Ճապոնիան որպես իր միակ տիրակալ: Մեյձին նաև հրամայեց ստեղծել Օկինավա պրեֆեկտուրա նախկին Ռյուկյու Իշխանության-Թագավորության տեղում: Ռյուկյուի բռնակցմամբ Ճապոնիան նպաստեց չինական Ցին կայսրության կործանմանը: Այսպիսով, Ճապոնիան մի քայլ կատարեց «քաղաքակիրթ» երկրների ակումբին միանալու ուղղությամբ, այսինքն՝ իրավունք հարձակվելու ավելի թույլի վրա: Չինաստանը չճանաչեց Ռյուկյուի միացումը Ճապոնիային:

## **Գլուխ III. Ճապոնիան 1880-ականներին**

### 1880թ.. Մեյձիի կառավարման 13-րդ տարին:

Այս տարին շատ նշանակալից էր երկրի ապագայի համար, քանի որ դեկտեմբերին սենատը վերանայեց կրթության օրենքը: Մեյձիի ճանապարհորդությունները երկրով մեկ և դպրոցական գործերին ծանոթանալը ցույց տվեցին, որ ներկայիս դպրոցը հնազանդ հպատակներ չի տալիս: Ոչ բոլոր ճապոնական դպրոցները, բայց խնդիրն առկա էր: Երիտասարդներն ակնհայտորեն ավելի քիչ հարգանքով էին վերաբերվում իշխանություններին և ծնողներին, նրանք կարծում էին, որ կյանքի նպատակը անձնական «երջանկությունն» է, նրանք հեշտությամբ ներգրավվում էին քաղաքական գործունեության մեջ, ամեն հարցում երիտասարդներն ունեին իրենց սեփական տեսակետը, նրանք ոչնչին չէին հավատում և սադրիչ հարցեր էին տալիս: Երիտասարդ սերնդի համար գիտության լեզուն ավելի պարզ էր, քան բարոյականության և պարտքի հին լեզուն: Որոշվեց ամրապնդել դպրոցական ծրագրերի բարոյական բաղադրիչը: «Բարոյականություն» ասելով առաջին հերթին հասկանում էին նվիրվածություն կայսրին և ծնողների նկատմամբ հարգանք:

Նոյեմբերի 3-ին արքունիքում նշեցին Մեյձիի ծննդյան օրը: Այն նշանավորեց ազգային օրհներգի կրկնակի երևան գալուն: Այժմ երկրում կայսրին փառաբանող օրհներգ կա, բայց «ժողովուրդը» դեռևս չի տոգորվել այն մտքի հետ, որ պետք է սիրի իր կայսրին առանց իշխանությունների որևէ հուշման: Այս տարվանից Մեյձիի պաշտոնական լուսանկարը սկսեցին ուղարկել բանակային ստորաբաժանումներ: Դա ևս մեկ անգամ հիշեցնելու էր, թե ով է երկրի գերագույն գլխավոր հրամանատարը:

### 1882թ.. Մեյձիի կառավարման 15-րդ տարին:

Հունվարի 4-ին կայսրը հրապարակեց հրամանագիր, որը մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտ եղավ կայսեր հավատարիմ զինվորների կրթության հիմնական փաստաթուղթ: Զինվորական անձնակազմից Մեյձիին պահանջում էր անվերապահ հավատարմություն իր և երկրի հանդեպ, համեստություն և ազնվություն: Երկրի հանդեպ պարտքը լեռան պես ծանր է, բայց մահը՝ թռչնի փետուրից թեթև: Ինչպես «Հնգակետ կանոնադրության» երդումը,

հրամանագիրը նույնպես բաղկացած էր հինգ կետից: Նրանք փոխկապակցված էին հինգ հիմնական տարրերի հետ՝ ծառի, կրակի, հողի, մետաղի և ջրի հետ, որոնցից կազմված է այս աշխարհը, որը փոխվում է կախված հինգ տարրերի համակցություններից, բայց հենց իրենք մնում են անփոփոխ:

### 1884թ.. Մեյձիի կառավարման 17-րդ տարին:

Այս տարի Նարա պրեֆեկտուրա այցելեց հանձնաժողով Օկակուրա Թենշինի (Կակուզո, 1862–1913թթ.), Կանո Թեսսայի և ամերիկացի պրոֆեսոր Էռնեստ Ֆենոլլոսայի (1853–1908թթ.) գլխավորությամբ: Հանձնաժողովի նպատակն էր ուսումնասիրել բուդդայական տաճարները և սինտոյական սրբավայրերը՝ կրոնական առարկաները ցուցակագրելու համար, որոնք կարելի էր որակավորել որպես արվեստի գլուխգործոցներ: Ֆենոլլոսան դասավանդել է Տոկիոյի համալսարանում 1878թ. և նա ոչ միայն բացեց ճապոնացիների աչքերը, այլ հավաքեց 20 հազարից բաղկացած հարուստ հավաքածու, որի մեծ մասն պահպանվում է Բոստոնի կերպարվեստի թանգարանում:

Ճապոնական արվեստի «բացահայտման» գործընթացում հսկայական դեր խաղաց նաև Օկակուրա Թենշինը: «Ազգային դպրոցի»՝ «կոկուգակու», գաղափարախոսները նախկինում պնդում էին, որ Ճապոնիայի յուրահատկությունը կայանում է նրանում, որ նրա տարածքում «ապրում են» սինտո աստվածները: Այժմ այդ «աստվածային ծածկագիրը» անցավ արվեստի հարթություն, բայց միննույն ժամանակ պահպանեց կապը արշիպելագի տարածքի հետ: «Ճապոնացիներն առանձնահատուկ մարդիկ են, հատուկ գեղեցկության զգացումով, քանի որ նրանք ապրում են յուրահատուկ հողի վրա»<sup>2</sup>, պնդում էր Օկակուրան: Նա պնդում էր, որ ճապոնացիների՝ «Յամատոյի ժողովուրդի», եզակի հատկանիշը կայանում է նրանում, որ նրանք ունակ են հարմարեցնել օտարը ներդաշնակեցնելով տեղականի հետ: Նա Ճապոնիան սահմանում էր որպես «ասիական քաղաքակրթության թանգարան»: Իր զարգացման ընթացքում Ճապոնիան միայն շահում է և չի կորցնում ոչինչ:

---

2. [A. Мещеряков «Император Мэйдзи и его Япония», էջ 328](#)

Դպրոցական կրթության մեջ ավելի մեծ ուշադրություն սկսեցին հատկացվել բարոյական կատարելագործմանը և ռազմաֆիզիկական պատրաստվածությանը: Դպրոցը սովորեցնում էր սիրել կայսրին և հայրենիքը, դպրոցների բակերում սովորողները պարապում էին մարզագնդերով և փայտե սրերով: Դպրոցն աստիճանաբար վերափոխվում էր «մշակութային ահաբեկումի» գործիք, երբ ամեն ինչ ծառայում է մեկ նպատակի՝ դաստիարակելու իշխանությանն առավել հնազանդ, այլ ոչ թե ազատ մարդկանց:

Հոր հանդեպ պարտքի փոխաբերությունը տարածվեց կայսրի նկատմամբ. «Մենք պետք է պատվենք կայսրին այնպես, ինչպես հարգում ենք մեր ծնողներին», «Տիրակալը նման է հորը: Երբեք մի մոռացեք ձեր պարտքը նրա հանդեպ»: Այլ կերպ ասած՝ ընտանեկան արժեքները դարձան ազգային նշանակության արժեքներ, և կայսրը դարձավ Ճապոնիայի բոլոր ընտանիքների խիստ և արդար հայր:

### 1886թ.. Մեյձիի կառավարման 19-րդ տարին:

Այս տարին նշանավորվեց նոր ժամանակների միտումների նկատմամբ լուրջ զիջումներով: Մեյձիի կինը՝ Հարուկոն, սկսեց ավելի հաճախ դուրս գալ հանրություն: Երբեմն նա նույնիսկ փոխարինում էր կայսրին, երբ նա չէր կարող մասնակցել որևէ միջոցառման:

Ճապոնիան ավելի մեծ ուշադրություն էր դարձնում հարձակողական, այլ ոչ թե պաշտպանական զենքի մշակմանը: Նավատորմը դարձավ նրան հիմքը:

Մարտին Տոկիոյի համալսարանը վերանվանվեց Կայսերական համալսարանի: Նրա շրջանավարտներին տրվում էին աներևակայելի արտոնություն՝ առանց քննությունների ընդունվել պետական ծառայության: Սա էր պատճառներից մեկը, որ համալսարան ընդունվելն աներևակայելի դժվար էր:

Հուլիսի 30-ին Հարուկոն առաջին անգամ հանրություն դուրս եկավ եվրոպական զգեստով: Կայսրուհին ամբողջ երկրին ցույց տվեց, որ այժմ ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք պետք է եվրոպական հագուստ կրեն: Կայսրին հետևելով՝ կայսրուհին սկսեց «սովերից» դուրս գալ «լույս»: Կայսրուհու տված ազդանշանը ճիշտ

մեկնաբանվեց, և արդեն այս տարվա աշնանն ամենաբարձր քաղաքական հասարակության տիկնայք անցան եվրոպական հագուստի:

Ընտանեկան հարաբերությունների ոլորտում նկատվում էր շեղում դեպի քրիստոնեական միամուսնություն: Այդ ժամանակի փորագրություններում Մեյձին և նրա կինը սկսեցին հաճախ հայտնվել միասին: Նրանք սկսեցին իրենց ցուցադրել որպես օրինակելի, մենամուսնական և երեխաներ սիրող զույգ:

### 1887թ.. Մեյձիի կառավարման 20-րդ տարին:

Ճապոնացիները բոլորովին չէին ձգտում վերցնել համակարգված փոխառությունները մեկ երկրից: Նրանք իրենց պահում էին ինչպես սուպերմարկետում՝ հավատալով, որ յուրաքանչյուր երկիր ունի իր «ուժեղ կողմը»: Ճապոնիան սկսեց կառուցել իր արդյունաբերությունը և նավատորմը բրիտանական նմուշի համաձայն, Ֆրանսիան օրինակ ծառայեց ոստիկանության և կրթության ոլորտում, Ամերիկյան փորձը օգտակար էր Հոկայդոյի զարգացման գործում, բժիշկ ուսանողներն ու պալատականները վերապատրաստում էին գերմանացիները, այսինքն՝ Ճապոնացիք կառուցում էին իրենց սեփական քաղաքակրթությունն ու մշակույթը չհամարելով պարտական ոչ մեկին:

Ապրիլի 26-29 արտգործնախարար Ինոուե Կաորուի նստավայրում տեղի ունեցավ Կաբուկիի թատրոնի դերասանների ելույթը: Ներկայացումներին ներկա էին Մեյձին և Հարուկոն: Կաբուկին ազգային թատրոն է, բայց այն միշտ համարվել է հասարակ ժողովրդի թատրոն, արիստոկրատները երբեք ներկա չեն եղել նրանց ներկայացումներին: Դերասանների ելույթը երկրի բարձրաստիճան պաշտոնյաների առջև վկայում էր վերնախավի գիտակցության կարևոր տեղաշարժի մասին: Հետևելով դեմոկրատական թատրոնին նա ազդարարեց իր մտերմությունը «ժողովրդի» հետ:

### 1888թ.. Մեյձիի կառավարման 21-րդ տարին:

Ապրիլի 30-ին ստեղծվեց նոր պետական ինստիտուտ՝ Գաղտնի խորհուրդ՝ Սումիցուին: Նրա անմիջական խնդիրն էր սահմանադրության տեքստի և կայսերական տան վերաբերյալ կանոնակարգերի պատրաստումը: Գաղտնի խորհրդի վիթխարի կարևորության մասին վկայում է այն փաստը, որ Իտո Հիրոբումին թողեց



վարչապետությունը և դարձավ Գաղտնի խորհրդի նախագահ: Գաղտնի խորհուրդը, որի լիազորությունները շատ մշուշոտ էին, գոյություն ունեցավ մինչև 1947թ.:

Այս տարի սկսվեց ժամացույցների տեղական արտադրությունը և իրենց էժանության պատճառով արագ փոխարինեցին արտասահմանյան ժամացույցները:

### 1889թ.. Մեյձիի կառավարման 22-րդ տարին:

Այս տարին Ճապոնիայի պատմության մեջ մտավ որպես սահմանադրության հռչակման տարի: Սահմանադրության տեքստը պատրաստվել է խիստ գաղտնիության պայմաններում՝ հանրային քննարկման մասին անգամ խոսք չի եղել: Սահմանադրության նախագծին նախ ծանոթացել է նախարարների կաբինետը, հետո տեքստը հավանության է արժանացել Գաղտնի խորհրդի միայն 16 անդամների կողմից: Սահմանադրության գլխավոր ճարտարապետը Իտո Հիրոբումին էր: Նա ուշադիր ուսումնասիրեց եվրոպական երկրների սահմանադրությունները և եկավ այն եզրակացության, որ քրիստոնեությունը Եվրոպայի քաղաքական կյանքի գերիշխող հատկանիշ է, որն ի վիճակի է միավորել մարդկանց՝ պետական կարևորագույն նպատակներին հասնելու գործում: Ինչ վերաբերում է Ճապոնիային, ապա միայն կայսերական ընտանիքը և նրա տեսանելի մարմնավորումը՝ կայսրը, կարող էին համախմբել ամբողջ բնակչությանը:

Սահմանադրությունը գրվում էր ըստ «կայսրի»: Մեյձին այժմ պաշտոնապես ստացավ գլխավոր հրամանատարի դիրք: Սահմանադրության հետ մեկտեղ, ընդունված «Կայսերական տան մասին կանոնակարգում» առաջին անգամ մտցվեց գահի իրավահաջորդության խիստ կարգ: Գահը փոխանցվում էր արական գծով միայն կայսեր անմիջական ժառանգներին:

Ճապոնիայի սահմանադրությունը ճանաչում էր խոսքի և կրոնի ազատություն: Չնայած խորամանկ վերապահումներին («եթե դա չի վնասում խաղաղությանը և կարգին», «եթե դա չի հակասում հպատակների կողմից իրենց պարտականությունների կատարմանը»), դա հսկայական առաջընթաց էր: Սահմանադրությունը ճանաչում էր նաև քաղաքական կուսակցություններ: Խորհրդարանը կարող էր օրինագծեր ներկայացնել, բայց դրանք ուժի մեջ էին մտնում

միայն կայսրի հաստատումից հետո: Չնայած խորհրդարանի սահմանափակ լիազորություններին, պետք է հիշել, որ Ճապոնիան առաջին երկիրն էր ողջ հսկայական Ասիայում (Թուրքիան սահմանադրություն ընդունեց 1876թ., բայց այն տևեց մեկ տարուց պակաս), ով ուներ սահմանադրություն: Ռուսաստանն այն ժամանակ նույնպես չուներ սահմանադրություն, թեև այդ բառին ծանոթ էր շատ ավելի վաղ, քան Ճապոնիան:

Այդ ժամանակ կառավարությունը վերջապես որոշեց, որ Ճապոնիայի «արվեստը», որով այնքան հիացած էին օտարերկրացիները, կարող է նշանակալի ներդրում ունենալ ազգային հիշատակի հիմնադրամի ձևավորման գործում: Այդ առումով բազմաթիվ կրոնական պարագաներ վերածվեցին «արվեստի առարկաների»: Դրանք ցուցադրվեցին թանգարաններում և դարձան ազգային հարստություն:

## **Գլուխ IV. Ճապոնիան 1890-ականներին**

### 1890թ.. Մեյձիի կառավարման 23-րդ տարին:

Շատ հրապարակախոսներ սահմանադրությունը և խորհրդարանը համարեցին ապացույց, որ Ճապոնիան զգալիորեն մոտեցել է «քաղաքակիրթ երկրի» եվրոպական չափանիշին: Սակայն Արևմուտքը չցանկացավ դա ընդունել: Երկիրն ու բանակը հզորանում էին, բնակչությունն աճում, արդյունաբերությունը զարգանում:

Այս տարին Մեյձիի ազգային խորհրդանիշ վերածվելու նոր փուլն էր: Եթե նախկինում կայսեր դիմանկարը կարող էին տեսնել ընտրյալները, ապա այժմ նրանց շրջանակը վճռականորեն ընդլայնվեց: Պետական կառույցներում դիմանկարի առկայությունը սկսեց ընկալվել որպես խրախուսանք, իսկ բացակայությունը՝ պատիժ:

Հոկտեմբերին դպրոցները ստացան «Կրթության մասին մանիֆեստ», որը կարգադրում էր նախնիների կողմից կտակված և միայն Ճապոնիային բնորոշ «հավերժական» բարոյական արժեքների պահպանում: Այդ արժեքների աղբյուրը իշխող տունն է: Աշակերտները պետք է ամուր ըմբռնեին կոնֆուցիականության բարոյական չափանիշները՝ սիրել և հարգել ծնողներին, եղբայրներին և քույրերին, լինել հավատարիմ ընկեր, ամուսիններին առաջարկվում էր ապրել ներդաշնակ:

Ճապոնական արդյունաբերության հաջողությունները տեսանելի էին բոլորին՝ ներքին արտադրությունը փոխարինում էր ներմուծվածը: Այս տարի վաճառքի հանվեցին ճապոնական արտադրության հեծանիվներ: Դրանք ավելի էժան էին, քան ներկրվածները, բայց այդպես էլ մնացին շքեղության առարկա: Հարցին, թե ո՞ւմ կցանկանային տեսնել որպես ապագա ամուսին, աղջիկները նախընտրում էին հեծանիվ և հեռախոս ունեցող մարդուն:

### 1892թ.. Մեյձիի կառավարման 25-րդ տարին:

Հունիսին լույս տեսավ պատմության նոր երկհատոր դասագիրք և կոչվում էր «Կայսրության հակիրճ պատմություն»: Այն սկսվում էին հետևյալ խոսքերով. «Աշխարհում շատ երկրներ կան, բայց Ճապոնիան լավագույնն է: Այստեղ կլիման ոչ շատ տաք է և ոչ շատ ցուրտ, հողը բերրի է և շատ թեյ, բրինձ և թուփ է տալիս: Հին ժամանակներից մեր ժողովուրդը բարձր է գնահատել հարգանքը, աչքի է ընկել խորը հավատարմությամբ և երբեք չի նվաստացվել այլ երկրների կողմից: Պատմության սկզբից մինչև մեր օրերը մեր կայսերական տոհմը չի ընդհատվել և մշտապես ծաղկել է: Ուրիշ ոչ մի տեղ չկա այսպիսի գեղեցիկ երկիր, ինչպիսին մերն է: Մեր բախտը բերել է, որ ծնվել ենք այս երկրում: Օրհնված լինելով, որ ծնվել էք այստեղ, դու պետք է մանրամասնորեն իմանաս այս երկրում տեղի ունեցած իրադարձությունները»<sup>3</sup>:

Դպրոցական կրթության մեջ հսկայական դեր խաղաց աշխարհագրությունը: Պարզվում է, եթե աշխարհագրությունը «լավն» է, ապա նրա պատմությունն էլ պետք է գերազանց լինի: Ցանկացած առարկայի դասընթացն ավարտվում էր նրանով, որ Ճապոնիան աշխարհի լավագույն երկիրն է:

Աշակերտի սուրբ պարտքն էր դառնալ արժանի այս հողին, կայսրին և այն բնակեցված նշանավոր անհատականություններին՝ ռազմիկներին, արվեստագետներին, գրողներին և մտավորականներին:

---

3. [А. Мещеряков «Император Мэйдзи и его Япония», էջ 399](#)

Աշակերտի սուրբ պարտքն էր դառնալ արժանի այս հողին, կայսրին և այն բնակեցված նշանավոր անհատականություններին՝ ռազմիկներին, արվեստագետներին, գրողներին և մտավորականներին:

Տարբեր երկրներ ու ժողովուրդներ ուսումնասիրելիս միշտ ընդգծվում էր ոչ թե այն, ինչը նրանց միավորում է Ճապոնիայի հետ, այլ այն, ինչն առանձնացնում է:

Բնականաբար, նման հրաշալի երկիրը պետք է հուսալիորեն պաշտպանված լինի: Դպրոցները շաբաթական վեց ժամ հատկացնում էին զինվորական պարապմունքներին, իսկ աշակերտները կրում էին զինվորական համազգեստ: Ապագա ուսուցիչները դիտարկվում էին որպես երեխաների՝ ապագա սպաների, հրամանատարների:

#### 1894թ.. Մեյձիի կառավարման 27-րդ տարին:

Օտարերկրացիների գնալով անհարմար էր դառնում Ճապոնիայում: Ազգայնական տրամադրությունները գնալով ավելի էին տարածվում, թերթերը, հասարակությունը և խորհրդարանի երկու պալատները կառավարությունից պահանջում էին «անկախ արտաքին քաղաքականություն»: Երկրում իրավիճակը խիստ լարված էր: Չին-ճապոնական պատերազմի մեկնարկին մնում էր չորս ամիս:

Մարտի 9-ին նախատեսված էին տոնակատարություններ Մեյձիի և Հարուկոյի արծաթե հարսանիքը կապակցության: Բհարկե, ավանդական Ճապոնիայում նման տոնակատարություններ երբեք չեն եղել, սակայն քաղաքական վերնախավը արծաթե հարսանիքը համարում էր լրացուցիչ հնարավորություն հիշեցնելու Մեյձիի հպատակներին նրա գոյության մասին: Ավելի էր ուժգնանում այն գաղափարը, որ պետությունը մեծ ընտանիք է, իսկ ընտանիքը, բնականաբար, պետք է ամուր լինի, նրա բոլոր անդամները մինչև մահ պետք է հավատարիմ լինեն միմյանց: Դա հենց այն է, ինչ սովորեցնում էին դպրոցներում: Ուսուցիչները կրկնում էին դասագրքի խոսքերը. «Ճապոնիայում բոլոր ընտանիքները կայսեր ընտանիքի ճյուղերն են, բոլոր հպատակների համար կայսրը հայրն է, իսկ կայսրուհին՝ մայրը»:

Ընտանիքը պետք է ամուր լինի, բայց Մեյձիի ժամանակաշրջանի ամուսնական բարքերը խիստ չէին: Երեք ամուսնություններից մեկն ավարտվում էր

ամուսնալուծությամբ: Իսկ Տոկիոյում դրությունն ավելի վատ էր: Միանգամայն պարզ էր, որ ճապոնական ընտանիքը շատ հեռու էր մենամուսնության իդեալից, մարդիկ միանում էին ու բաժանվում, հասարակությունը դատապարտելի չէր համարում սիրուհի ունենալը:

Ըստ գաղափարախոսության՝ պետությունը մեկ ընտանիք է, և պետության հանդեպ հարաբերություններում հպատակները պետք է բխեն հավերժական հավատարմության իդեալից: Պետությունը պետք է մենամուսնական լինի: Ուստի, ճապոնիայի հիմնական ամուսնական գույգը պետք է ցույց տար ամուսնական կապերի անձեռնմխելիության օրինակ:

Կորեայում մոլեգնում էր Տոնհակ՝ «արևելյան ուսմունք», գյուղացիական ապստամբությունը: Տոնհակները «Արևելյան ուսմունքի» համախոհներ էին համարում ճապոնացիներին՝ իրենց «ստորաքարշությունով» Արևմուտքի հանդեպ, և նույնիսկ չինացիներին: Տոնհակները իրենց աղքատության մեջ մեղադրում էին «օտարներին վաճառված» պաշտոնյաներին: Կառավարությունը ուժ չունեցրեց զսպելու ապստամբներին և օգնության կանչեց չինական զորքերին: Այսպիսով, ճապոնիան հիանալի պատրվակ ստացավ իր զորքերը ուղարկելու Կորեա:

Օտար ներխուժման պայմաններում, գյուղացիական բանակը և Կորեայի կառավարությունը հաշտություն կնքեցին: Մակայն ոչ Չինաստանը, ոչ ճապոնիան հետ չքաշեցին իրենց զորքերը:

Հուլիսի 23-ին ճապոնական գումարտակը ներխուժեց Սեուլի թագավորական պալատ: Առանց գահից հրաժարվելու՝ Վան Կոջոն իշխանությունը փոխանցեց իր հորը՝ Լի Հաինին, ով հանդիսանում էր ռեգենտ, իսկ երկու օր անց նա հայտարարեց Չինաստանի հետ պայմանագրի չեղարկման մասին և խոստացավ ամեն ինչում խորհրդակցել ճապոնիայի դեսպանի հետ: Չինաստանը հրաժարվեց ճանաչել նոր տիրակալին և դուրս չբերեց իր ստորաբաժանումները:

Օգոստոսի 1-ին մարտերը բուռն ընթացքի մեջ էին: Հաջորդեց Մեյձիի գերագույն հրամանագիրը՝ պատերազմ հայտարարելու մասին: Հրամանագրում ասվում էր, որ ճապոնիայի նպատակն է Կորեայի անկախության ձեռք բերումը և «վատ

կառավարման բարեփոխումը»: Ճապոնական Մեծ Կայսրությունը սկսեց իր առաջին պատերազմը:

Եվրոպական տերությունները չեզոք մնացին՝ հավատալով, որ Ճապոնիան երբեք չի հաղթի հսկա Չինաստանին:

Ճապոնական զորքերը հաղթանակ հաղթանակի հետևից տարան: Ճապոնական հարձակումը բնութագրվեց որպես «քաղաքակրթության և բարբարոսության պատերազմ»: Նոյեմբերի 22-ին անձնատուր եղավ Լյուչուն՝ Պորտ-Արտուրը:

### 1895թ.. Մեյձիի կառավարման 28-րդ տարին:

Մարտի 20-ին Սիմոնոսեկի քաղաքում սկսվեցին խաղաղության բանակցությունները: Ճապոնական բանակը արդեն գրավել էր Լյուչուն՝ Պորտ-Արտուրը, Դայյանը և Վեյհավեյ նավահանգիստը, չինական նավատորմի մեծ մասը ոչնչացվեց:



Չինադադարը և միջազգային հասարակական կարծիքը չփրկեցին Չինաստանին կնքված խաղաղության պայմանագրում արձանագրված հսկայական կորուստներից: Կորեան հրաժարվեց Չինաստանի հետ հարկատու հարաբերություններից և անկախացավ, Թայվանը, Պեսկադորես կղզիները և Լյաոդունի թերակղզու հարավային մասը անցան Ճապոնիայի տիրապետության տակ, Չինաստանը փոխհատուցում վճարեց մոտ 300 մլն իեն: Չնայած պայմանագրի չափազանց

բարենպաստ պայմանների, շատ ճապոնացիներ վրդովվեցին, քանի որ սպասում էին, որ ճապոնական բանակը կհասնի Պեկին:

Ապրիլի 23-ին Ռուսաստանը, Ֆրանսիան և Գերմանիան ճապոնիայից պահանջեցին Լյաոդունի թերակղզուց դուրս բերել զորքերը: Ճապոնիան ստիպված էր ընդունել այդ պայմանը: Եռյակի ճնշմանը ենթարկվելով՝ ճապոնիան միջոցներ ձեռնարկեց «դեմքը փրկելու համար»:

Չինաստանի հետ պատերազմում հաղթանակը ձեռք բերվեց հիմնականում այն պատճառով, որ ճապոնիան, ի տարբերություն Չինաստանի, անցկացրել էր արդիականացում: Նա ստեղծեց բանակ, արդյունաբերություն և եվրոպական ոճի ազգ, ինչը թույլ տվեց իրեն պահել այնպես, ինչպես եվրոպական տերությունները՝ առանց հարցնելու որոշել այլ երկրների ճակատագիրը: Պետք է հիշել, որ ճապոնիան զարգացրեց ոչ միայն իր ռազմական արդյունաբերությունը, այլ նաև փորձեց սիրապետել գիտելիքների և հմտությունների բոլոր ոլորտները:

Ճապոնիան դարձավ Ասիայի առաջին երկիր, որը ստիպեց արևմտյան աշխարհին հաշվի նստել իր հետ:

#### 1897թ.. Մեյձիի կառավարման 30-րդ տարին:

Հոկտեմբերին Կորեայի թագավորը՝ Գոջոնը, իրեն հռչակեց կայսր: Սա հավասարազոր էր Չինաստանից անկախության հռչակմանը: Դեկտեմբերին Ռուսաստանը նրան ճանաչեց որպես ինքնիշխան կառավարիչ, և ռուսական նավերը մոտեցան Լյուչուն՝ Պորտ-Արտուր, և փակեցին երկու կիլոմետրանոց նեղ անցուղին: Ի պատասխան՝ ճապոնացիները ականապատ փակոց տեղադրեցին Սասեբոի իրենց հենակետում: Այն ժամանակ ոչ ոք չէր պատրաստվում լուրջ ռազմական գործողություններ սկսել, բայց փոխադարձ անվստահություն յոթ տարի հետո կբերի պատերազմի:

#### 1898թ.. Մեյձիի կառավարման 31-րդ տարին:

Մարտին Ռուսաստանը «վարձակալեց» Գուանդուն թերակղզին: Իսկ երեք ամիս անց պայմանագիր կնքվեց Չինաստանի հետ Հարավ-Մանջուրիան երկաթուղու կառուցման վերաբերյալ: Երկաթուղին կապելու էր Պորտ-Արտուրը և Դալյանը:

Ռուսաստանը որոշակի ջանքեր գործադրեց Կորեական թերակղզում տնտեսապես հաստատվելու համար:

## **Գլուխ V. Ճապոնիան 1900-ականների սկզբին**

### 1900թ.. Մեյձիի կառավարման 33-րդ տարին:

Այս տարին Ճապոնական բանակն առաջին անգամ մասնակցեց միջազգային կռիվից հայտնի: Չինաստանում Բոքսերների ապստամբության ճնշմանը մասնակցել է 45 հազար զինվոր ութ երկրներից՝ ներառյալ Ամերիկայից, Անգլիայից, Գերմանիայից, Ռուսաստանից, Ֆրանսիայից: Կոնտինգենտի մոտ կեսը Ճապոնական զորքեր էին:

Հունիսի 15-ին որոշում կայացվեց Ճապոնական զորքեր ուղարկել Չինաստան: Ճապոնիան վերջապես դարձավ «քաղաքակիրթ»՝ այլ «կրթված» երկրների հետ պաշտպանեց «քաղաքակրթությունը» «բարբարոսներից» իր սահմաններից դուրս, ինչի համար ստացավ «Հեռավոր Արևելքի ժանդարմ» պատվավոր մականունը:

Այս տարի վերջապես չորսամյա պարտադիր կրթությունը դարձավ անվճար: Բայց պետությունն իր բյուջեյով սովորեցնու էր այն, ինչ ինքն էր անհրաժեշտ համարում:

### 1902թ.. Մեյձիի կառավարման 35-րդ տարին:

Անգլիան դարձավ Ճապոնիայի գլխավոր ռազմաքաղաքական գործընկերը: Հունվարի 17-ին Անգլիայի հետ ստորագրվեց համաձայնագիր, ըստ որի նախատեսում էր Կորեայի և Չինաստանի անկախությունը: Ճապոնացի բոլոր բարձրաստիճան պաշտոնյաներից միայն Իտո Հիրոբումին և Ինոուե Կաորուն դեմ էին Անգլիայի հետ դաշինքին: Նրանք կարծում էին, որ Ռուսաստանի հետ դաշինքն ավելի շահավետ կլինի: Ռուսաստանը ճանաչեց Ճապոնիայի իրավունքը օկուպացնել Կորեան՝ Ռուսաստանի կողմից Մանչուրիայի օկուպացիայի դիմաց: Այս դեպքում պատերազմը հարկավոր չէ:

Ռուսաստանը դժկամությամբ ճանաչեց Ճապոնա-բրիտանական պայմանագիրը և խոստացավ դուրս բերել իր զորքերը Մանչուրիայից:



### 1903թ. Մեյձիի կառավարման 36-րդ տարին:

Էլեկտրաէներգիան սկսեց իր հաղթական երթը ողջ Ճապոնիայով: Նոյեմբերին Տոկիոյի փողոցներում գործարկվեց առաջին տրամվայը:

Այս տարի Տոկիոյում բացվեց առաջին կինոթատրոնը: Ճապոնիայում ֆիլմերը ցուցադրվում էին 1896թ., բայց մշտական կինոթատրոններ չկային: Քարե շենքը ստացավ «Դենքիկան»՝ «Էլեկտրիկ պալատ» անունը:

Ճապոնիայի և Ռուսաստանի միջև բանակցությունները դեռ շարունակվում էին Մանջուրիայի և Կորեայի վերաբերյալ, սակայն հասարակությունը ուզում էր պատերազմ:

### 1904թ. Մեյձիի կառավարման 37-րդ տարին:

Ճապոնիան ուզում էր «փոխշահավետ փոխանակում» կատարել Ռուսաստանի հետ՝ Ռուսաստանը ճանաչեր Կորեան որպես Ճապոնիայի շահերի ոլորտ, իսկ նա գործողությունների ազատություն կստանար Մանջուրիայում: Սակայն Ռուսաստանը չցանկացավ հրաժարվել կորեական ամբիվիաներից:

Ճապոնացիները որոշեցին խզել բանակցությունները և փետրվարի 4-ին Մեյձիի ներկայությամբ տեղի ունեցավ հանդիպում, որտեղ որոշվեց պատերազմ սկսել:

Ռուսական հրամանատարությունը ռազմական գործողությունների մեկնարկի մասին տեղեկություն չստացավ, քանի որ հեռագրական գիծը կտրված էր: Փետրվարի 8-ի լույս 9-ի գիշերը Ճապոնական նավատորմը հարձակվեց ռուսական նավատորմի վրա: Պատերազմը պաշտոնապես հայտարարվեց հարձակման հաջորդ օրը:

Տասնամյակի ընթացքում Ճապոնիան երկրորդ անգամ հարձակվեց առաջինը: Թեև Ճապոնիան երեք օր առաջ խզեց դիվանագիտական հարաբերությունները Ռուսաստանի հետ, քչերն էին պատկերացնում, որ Ճապոնիան «կհամարձակվի» հարձակվել եվրոպական գերտերության վրա:

Այս պատերազմը հստակ ցույց տվեց, որ այժմ զինվորների հասակը, զեղեցկությունն ու ուժն այլևս բանակի հիմնական առավելությունները չեն: Չենքի

որակն ու օգտագործման ունակությունը, ժամանակակից հաղորդակցությունները, գորքերի շարժունակությունն ու վերահսկելիությունը, սպաների և գեներալների որակավորումը՝ ահա թե ինչն է որոշում արդյունքը:

Ռուսական նավատորմի առաջին պարտությունները ծանր տպավորություն թողեցին ինչպես Ռուսաստանի, այնպես էլ քրիստոնեական աշխարհի զգալի մասի վրա:

Ամերիկյան շատ թերթեր հիացած էին ճապոնական բանակի հաղթանակներով: Նույնիսկ ոչ այնքան ճապոնացիների հաղթանակներով, որքան ռուսների պարտությամբ: Խոշոր երկրներից Ռուսաստանի հետ մնաց միայն Ֆրանսիան, որը մտահոգված էր իր հնդկա-չինական ունեցվածքով:

Սա առաջին պատերազմն էր, երբ լուսանկարիչներն ուղեկցում էին յուրաքանչյուր ստորաբաժանումը: Այդ ժամանակ լուսանկարչությունը լայն տարածում գտավ Ճապոնիայում: Այնպես որ, լուսանկարիչները լավ գումարներ էին վաստակում նաև ներքին ճակատում:

Ռուսական կայսրության հպատակների մեջ պատերազմի հակառակորդները ավելի շատ էին, քան Ճապոնիայում: Ինչ վերաբերում է ճապոնացիներին, ապա նրանցից շատ քչերը համարձակվեցին քննադատել: Նրանցից մեկը Նացումե Սոսեկին էր: Իր «Ձեր խոնարհ ծառա կատուն» հիասքանչ պատմվածքում նա քարը քարի վրա չի թողնում պաշտոնական հայրենասիրությունից:

Այս տարի սակուրան դարձավ Ճապոնիայի իսկական խորհրդանիշ: Դպրոցական դասագրքերը սակուրային հակադրում էին «չինական ծաղիկների թագավորին»՝ քաջվարդին՝ բարեկեցության և ազնվականության խորհրդանիշին, և «ծաղկային Եվրոպայի թագուհուն»՝ փարթամ և բուրավետ վարդին: Սակուրան զուգորդվում էր մաքրության՝ մտքերի և գործերի, հետ:

### [1905թ.. Մեյձիի կառավարման 38-րդ տարին:](#)

Ռուսաստանում հեղափոխություն էր ծավալվում, իսկ քաղաքական մեքենան ցույց էր տալիս քայքայման նշաններ: Մեյձիի հպատակները ցույց տվեցին իրենց

հավատարմությունը, Նիկոլայ II-ի հպատակները՝ հակակառավարական տրամադրությունների աճ:

Հունվարին՝ երկար ու արյունալի պաշարումից հետո, ընկավ Պորտ-Արտուրը: Ճապոնիայի ռազմական հաջողությունները ձեռք են բերվել ոչ միայն ռազմաճակատում տարած հաղթանակների շնորհիվ: Ռուսաստանում ճապոնացիներն ունեին հետախուզական լայն ցանց, որում ներգրավված էին կայսր Մեյձիի հարյուրավոր հպատակներ, ովքեր աշխատում էին որպես վարսահարդարներ, խոհարարներ և վաճառողներ: Ճապոնական հրամանատարությունը մանրամասն տեղեկացված էր ճանապարհների, կապի և ռուսական բանակի տեղակայման մասին:

Չնայած բոլոր հաղթանակներին, Ճապոնիան հասկացավ Ռուսաստանի ռազմական, մարդկային և ռեսուրսային ներուժը: Ճապոնիան առաջինն էր, ով սկսեց պատերազմը, և նա առաջինն էր ձգտում խաղաղության: Բոլորը գիտեին, որ Ճապոնիան կարող է դիմակայել միայն մեկ տարի և երկիրը պատրաստ չէ տևական պատերազմին:

Սակայն Ռուսաստանը չէր ցանկանում խաղաղություն, բայց վերջին փաստարկը հոգուտ արագ խաղաղության եղավ Սախալինի օկուպացիան Ճապոնիայի կողմից: Ենթադրվում է, որ Ռուզվելտն է դրդել Ճապոնիային օկուպացնել Սախալինը, որպեսզի Ռուսաստանն ավելի համաձայնողական դառնա:

Խաղաղության բանակցությունները պետք է տեղի ունենային Պորտսմութում՝ ամերիկյան փոքրիկ քաղաքում:

Ռուզվելտը համարում էր Ամերիկայի համար ձեռնտու, որ խաղաղության պայմանագրի կնքման արդյունքում կողմերից ոչ մեկը վճռական առավելություն չստանա, և անգամ պատերազմի ավարտից հետո երկու երկրները շարունակեն առճակատումը: Ճապոնիայի հաղթանակն արդեն առաջին հարվածը հասցրեց ամերիկյան շահերին՝ չինացիները «համարձակացան» և սկսեցին բոյկոտել ամերիկյան ապրանքները: Ռուզվելտը ճանաչեց Կորեայի հանդեպ ճապոնական

պրոտեկտորատը, իսկ Ճապոնիան համաձայնեց Ֆիլիպինների ամերիկյան տիրապետությանը:



Ռուսաստանը ճանաչեց Կորեան որպես Ճապոնական շահերի ոլորտ և տվեց Հարավ-Մանջուրիական երկաթուղին, ինչպես նաև զիջեց Լյաոդունի թերակղզու և Պորտ-Արտուրի վարձակալության իրավունքը: Հնարավոր դարձավ հասնել նաև տարածքային զիջման՝ Ճապոնիան ստացավ արդեն օկուպացված Սախալինի հարավային մասը:

Ըստ էության, Ճապոնիայի կառավարիչները ստացան այն ամենը, ինչ ցանկանում էին՝ ճանաչել իրենց «հատուկ» շահերը Կորեայում և մասամբ Չինաստանում:

Մեպտեմբերի 5-ին Ճապոնիայի և Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչները ստորագրեցին Պորտսմուտի խաղաղության պայմանագիր:

Ճապոնական հպարտությանը ավելացավ «տարածքային հպարտությունը»: Ճապոնիան ձեռք բերեց արտասահմանյան ունեցվածք, Մեյձիի իրավասության տակ գտնվող տարածքն ավելացավ գրեթե 40 հազար քառակուսի կիլոմետրով:

1899թ. շուրջ 30 երկրներ, այդ թվում՝ Ճապոնիան, Հաագայում ստորագրեցին ռազմագերիների նկատմամբ մարդասիրական վերաբերմունքի մասին կոնվենցիան: Ճապոնիան և Ռուսաստանը դարձան առաջին երկրները, որոնք

գործնականում կիրառեցին կոնվենցիայի դրույթները՝ Ռուսաստանն ու Ճապոնիան ռազմագերիներին մարդկայնորեն են վերաբերվել:

#### 1906թ.. Մեյձիի կառավարման 39-րդ տարին:

Փետրվարին բրիտանացի արքայազն Արթուրը ժամանեց Ճապոնիա և Մեյձիին շնորհեց Բրիտանական կայսրության բարձրագույն շքանշան՝ Հարթերի շքանշան: Մարշալներ Յամագատան և Օյաման, ինչպես նաև ծովակալ Տոգոն, ստացան «Արժանապատվության շքանշան»: Ճապոնացի զորապետերը դարձան այս մոլորակի առաջին մարդիկ, ովքեր, չլինելով անգլիական թագի հպատակ, ստացան այդ պարգևը:

Երկաթուղիները դարձան ամենաարդյունավետ միջոցը, որոց օգնությամբ նախկինում իրարից անջատ շրջանները դարձան մեկ ամբողջություն: Երթուղիների երկարաձգությամբ Ճապոնիան՝ Ասիայում, զիջում էր միայն Հնդկաստանին:

#### 1907թ.. Մեյձիի կառավարման 40-րդ տարին:

Հոբելյանական տարի էր՝ Մեյձին գահ էր բարձրացել 40 տարի առաջ: Շատերը կարծում էին, որ նոր Ճապոնիան նույնպես դարձավ 40 տարեկան: Երկիրը երբեք չի տոնել սյոգունատի տապալումը, սակայն «հին» և «նոր» Ճապոնիայի միջև անջրպետը դեռևս զգացվում էր: «Նոր Ճապոնիան» և Մեյձիի հոմանիշներ էին:

Հուլիսի 30-ին՝ հուլիսի 17-ին ըստ հուլյան օրացույցի, Ճապոնիան պայմանագիր կնքեց Ռուսաստանի հետ: Պայմանագրի բաց հատվածում խոսվում էր Ճապոնիայի, Ռուսաստանի և Չինաստանի սահմանների անձեռնմխելիության մասին: Սակայն փակ մասում ազդեցության ոլորտները բաժանված էր: Այսպիսով՝ Ճապոնիան պահպանեց Կորեան և Հարավային Մանջուրիան, Ռուսաստանը՝ Հյուսիսային Մանջուրիան և Արտաքին Մոնղոլիան: Ռուսաստանը փաստացի համաձայնեց Կորեայի միացմանը Ճապոնիային: Պայմանագրի ստորագրումից մի քանի օր առաջ Կոչոն թագավորը հրաժարվեց գահից, և գահ բարձրացավ Ճապոնացի հովանավորյալը՝ Սունչոնը:

Այս տարի քառամյա պարտադիր կրթությունը դարձավ վեցամյա: Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանող տարեկան դառնում էին 10 հազար տղա և աղջիկ: Այն ժամանակ աշխարհի խոշոր երկրներից ոչ մեկը չունեւ իշխանությանը հնազանդ այնպիսի բնակչություն, ինչպիսին Ճապոնիան էր: Եվ դրանում առանձնահատուկ դեր է խաղացել տարրական կրթության համակարգը: «Գործնական» գիտելիքների հետ մեկտեղ դպրոցը պետությանը տրամադրում էր «պատրաստի ճապոնացիներ»:

#### 1908թ.. Մեյձիի կառավարման 41-րդ տարին:

Եվրոպական տերությունների հետ մեկտեղ, Ճապոնիան շարունակում էր պատառոտել Չինաստանը: Ռուս-Ճապոնական պատերազմն ավարտվել էր երեք տարի առաջ, սակայն հետևանքները դեռ զգացվում էին: Ճապոնիան չընդունեց քրիստոնեություն, սակայն քրիստոնեական բարոյականությունն ավելի խորը արմատներ գցեց: Դա վերաբերում է նաև միամուսնությանը:


Կյանքն անխախտորեն շարժվում էր առաջ: Տոկիոյի փողոցներում հայտնվեցին առաջին փոստային մեքենաները:

#### 1909թ.. Մեյձիի կառավարման 42-րդ տարին:

Հոկտեմբերի 26-ին Գադունի խորհրդի նախագահը՝ Իտո Հիրոբումին, ժամանեց Հարբին: Իտոն ավելի վաղ ասել էր, որ պարզապես ուզում է մի փոքր լիցքաթափվել: Իրականում նրա այցի նպատակն էր Ռուսաստանի ֆինանսների նախարար՝ Վ.Ն.Կոկովցևի, հետ հանդիպումն էր: Քննարկվելու էին Կորեայի Ճապոնիային միացման ծրագրերը:

Նրանք դուրս եկան հարթակ, Իտոն զինված պահակի թիկնանցում կատարեց, շարժվեց դեպի Հարբինի ճապոնացի բնակիչներ ուղությամբ, ովքեր հավաքվել էին նրան ողջունելու: Այդ պահին ամբոխից առանձնացավ մի երիտասարդ և աստճանակից վեց կրակոց արձակեց: Առաջին երեք փամփուշտները մահացու վիրավորեցին Իտոյին: Դա կորեացի Ան Չոուն Գընն էր: Կես ժամ անց Իտոն մահացավ:

Հաջող մահափորձից երկու օր անց Ան Չոուն Գընին փոխանցեցին ճապոնացիներին: Նա դատապարտվեց մահապատժի՝ կախաղանի միջոցով: Ան Չոուն Գընը հիասթափված էր՝ նա իրեն համարում էր արդար գործի մարտիկ, խղճի բանտարկյալ, բայց մեղավոր ճանաչվեց գոեհիկ սպանության համար: Բանտում նա հասցրեց գրել ինքնակենսագրություն:



Ան Չոուն Գընը մահապատժի ենթարկվեց նշանակված օրը՝ 1910թ. մարտի 26-ին: Իր երկրում նա ճանաչվեց ազգային հերոս և իսկական հայրենասեր: Նա համարվում է կորեական ազգայնականության առաջամարտիկներից մեկը: Նման մարդկանց համար Հարբինը դեռ ուխտատեղի է:

Այս տարի Կանո Ջիգորոն (1860–1938թթ.) ընտրվեց Միջազգային օլիմպիական



կոմիտեի անդամ: Կանոն դարձավ առաջին ասիական ներկայացուցիչն այդ կազմակերպությունում: Մինչ այդ նա հասցրել էր ավարտել Տոկիոյի համալսարանի բանասիրական ֆակուլտետը և հնարել ձյուդոն, որը պետք է դառնար ճապոնիայի «այցեքարտը» միջազգային ասպարեզում: Կանոն պնդում էր, որ ձյուդոն ոչ այնքան մարտական սպորտաձև է, որքան «բարձր բարոյական» մարդու և «իսկական» մարտիկի դաստիարակելու միջոց, որն ուժեղ է իր սամուրայական ոգով:

Կանոն Ջիգորոն ամեն ինչ արեց, որպեսզի Օլիմպիական խաղերն առաջին անգամ անցկացվեն Ասիայում: Ճապոնիան դարձավ առաջին ասիական երկիրը և 1964թ. հյուրընկալեց Օլիմպիական խաղերը:

Կիոտոյի սակուրայի տեղը գրավեցին Տոկիոյի փողոցների լապտերը: Դա տեխնոլոգիական առաջընթացի անգուսպ հիացմունքի ժամանակ էր: Նույնիսկ մեծն գրող Նացումե Մոսեկին չկարողացավ լռել և ասաց, որ երեկոյան արհեստական լուսավորությունը Մեյձիի դարաշրջանի էությունն է: Իզուր չէ, որ կառավարման կարգախոսը նշանակում է «լուսավորյալ իշխանություն»:

### 1910թ.. Մեյձիի կառավարման 43-րդ տարին:

Իտո Հիրոբումին մահացել էր, բայց նրա կորեական ծրագրերն ընդանում էին ամբողջ ընթացքով: Հուլիսի 4-ին Ճապոնիայի և Ռուսաստանի միջև ստորագրվեց հետպատերազմյան երկրորդ պայմանագիրը: Պայմանագրի գաղտնի մասում խոսում էր պաշտպանական դաշինք ստեղծելու մասին՝ ուղղված Ամերիկայի դեմ: Ճապոնիային հաջողվեց համոզել Ռուսաստանին, որ նա դեմ չի լինի Կորեայի ամբողջական և վերջնական միացմանը Ճապոնիային: Սրանից հետո դժվար չէր ստանալ Անգլիայի համաձայնությունը:

Օգոստոսի 22-ին ստորագրվեց ճապոնա-կորեական պայմանագիրը, ըստ որի տեղի ունեցավ Կորեայի երկար սպասված անեքսիան:

Այժմ Ճապոնիային պատկանում էր Թայվանը, Սախալինը, Կորեան և նա սկսեց նմանվել «իսկական» գաղութատիրական տերության: Շատ ճապոնացիներ գոհ էին դրանից:

### 1912թ.. Մեյձիի կառավարման 45-րդ տարին:

Մեյձիի առողջությունն ամենալուրջ մտահոգությունների տեղիք էր տալիս: Տարեսկզբին պարզ դարձավ, որ նա չի կարողանում պատշաճ կերպով կատարել իր կայսերական պարտականությունները:

Հուլիսի 10-ին կայսրը մասնակցեց Տոկիոյի կայսերական համալսարանում ավարտական արարողությանը: Համալսարանը միակ քաղաքացիական



կրթական հաստատությունն էր, որը Մեյձին մշտապես այցելում էր: Համալսարանում գտնվելու ժամանակ նա իրեն թույլ զգաց: Եվս մի քանի օր նա ներկայանում էր հանրությանը, սակայն թուլությունն այնքան մեծ էր, որ նստած քունում էր: Հուլիսի 19-ին ընթրիքի կեսին նա վեր կացավ սեղանի մոտից, ասաց: «աչքերում մթնում է», և ընկավ: Դրանից հետո նա գրեթե ուշքի չեկավ:

Հուլիսի 20-ին կառավարական թերթում տպագրվեց պալատի նախարարության հաղորդագրությունը, որ կայսրը ծանր հիվանդ է: Չեղարկվեցին թատերական ներկայացումները և այլ զվարճանքները: Դա չլսված նորամուծություն էր: Հիվանդության փաստը սովորաբար թաքցվում էր հպատակներից: Ճապոնացիք առաջին անգամ իմացան, որ կայսրի սուրբ մարմինը ենթակա է մարդկային գոեհիկ հիվանդությունների՝ գաստրիտի, շաքարախտի, նեֆրիտի:

Կայսերական պալատի մոտ կառուցվեց երեք կետ, որտեղ ընդունվում էին ապաքինման ցանկությամբ նամակներ: Միասնության զգացումը կայսրի և նրա ժողովրդի միջև հասավ աննախադեպ գագաթնակետի: Պալատի դիմացի հրապարակը լցված էր հազարավոր մարդկանցով, ովքեր աղոթում էին Մեյձիի ապաքինման համար, բոլոր տաճարներում՝ սինտոյական, բուդդայական և քրիստոնեական, աղոթում էին Մեյձիի ապաքինման համար:

Մեյձին մահացավ հուլիսի 29-ին: Գահը ոչ մի րոպե չպիտի մնար ազատ: Երկու ժամ քննարկվեցին մանրամասներ արքայազն Յոշիհիտոի գահ բարձրանալու վերաբերյալ: Այդ իսկ պատճառով, ըստ պաշտոնական վարկածի, Մեյձին մահացել է հուլիսի 30-ին, զրո ժամ 43 րոպեին:


Ճապոնական թերթերը Մեյձիին համեմատում էին Պետրոս Առաջինի և Վիլյամ I-ի հետ: Նրա արժանիքներից էին համարվում սահմանադրության ստեղծումը, կրթության մասին հրամանագիրը, Չինաստանի և Ռուսաստանի դեմ տարած հաղթանակները և Կորեայի բռնակցումը:

Մեյձիի հուղարկավորությունը դարձավ ազգային իրադարձություն: Նույնիսկ մահացած լինելով՝ Մեյձին չկորցրեց ճապոնացիներին սոսնձելու կարողությունը:



Օգոստոսի 27-ին հանգուցյալ կայսրին հետմահու անվանեցին Մեյձի: Առաջին անգամ պատմական ժամանակաշրջանի անվանումն այդքան ամուր կապվեց տիրակալի հետ: Եվ դա նրան դարձրեց դարաշրջանի գլխավոր գործիչ:

Մեյձիի հուղարկավորությունը նոր հերոս բերեց երկիր: Պարզվեց, որ դա 3-րդ քանակի նախկին հրամանատար Նոգի Մարետուկեն է: Հենց երեկոյան, երբ պալատից դուրս բերվեց կայսեր մարմինը, նա և նրա կինը կատարեցին ջունձի՝



մահ գերագույն ավատիշխանի հետևից՝ նրանք ինքնասպան եղան: Նրանք չէին ուզում ապրել այս աշխարհում առանց իրենց կայսրի: Սկզբում Նոգի Մարետուկեի արարքի գնահատականները տարբեր էին՝ ամենա զմայլեցուցիչից մինչև ամենանվաստացուցիչը: Մակայն մի քանի տարի անց ամեն ինչ կտրուկ փոխվեց: Նոգին ճանաչվեց

միապետին հավատարմության չափանիշ: Այլ կարծիքները ողջունելի չէին:

Կյանքը շարունակվում էր: Այն շարունակվում էր առանց Մեյձիի և Նոգիի: Մի դարաշրջան ավարտվեց, մյուսը սկսվեց: Նախորդ դարաշրջանի հերոսները մեկը մյուսի հետևից հեռացան: Հաջորդ տարի մահացավ նաև վերջին այոգունը՝ Տոկուգավա Յոշինոբուն: Մահից առաջ նա հասցրեց ստանալ «Ծագող արևի» շքանշան այն բանի համար, որ 46 տարի առաջ հրաժարվեց դիմադրությունից և զնաց ստվեր՝ ազատելով իր տեղն արևի տակ Մեյձիի համար:

## ՎԵՐՋԱԲԱՆ

Մահից հետո Մեյձին դարձավ Ճապոնիայի խորհրդանիշ՝ հին Ճապոնիան, որը կարողացավ վերածվել նորի, և որը չցանկացավ կորցնել կապն անցյալի հետ:

Մեյձիի Ճապոնիան ուներ երկու դեմք՝ մեկը նայում էր ապագան, մյուսը՝ անցյալ: Ճապոնիան կյանքի կոչեց նորը, որը հավասարակշռված էր ավանդույթներով:

Ճապոնիան վտանգի տակ էր դառնալու կիսագաղութ: Դա դրդեց երիտասարդ և գործունյա մարդկանց վճռականորեն շարժվել դեպի արդիականացում: Նրանք Մեյձիին որպես վահան առաջադրեցին, վերացրին սյոգունատը, և հայտարարվեց կայսրերի դարավոր իշխանության «վերականգնում»:

Մեյձին շրջապատված էր շատ ընդունակ մարդկանցով, և նրա երկիրը իսկապես հասավ բոլոր այն նպատակներին, որին ձգտում էր.

- Արդյունաբերական հեղափոխության, Ճապոնիայում ստեղծվեցին երկաթգծեր և հեռագրագծեր, կառուցվեցին հարյուրավոր գործարաններ;
- Ճապոնիան դարձավ համընդհանուր գրագիտություն ունեցող երկիր;
- Ստեղծեց ազգային մշակույթ, որը հիացնում էր ամբողջ աշխարհը;
- Երկիրը հավասարվեց արևմտյան գերտերություններին՝ ամբողջ աշխարհը վախենում էր Ճապոնիայից
- Նրա ենթակայության տակ գտնվող տարածքի մակերեսը կրկնապատկվեց:

Այսպիսով, ավարտելով խոսքս՝ ուզում եմ անպայման նշել, որ հետազոտական աշխատանքը ոչ միայն հարստացնում է սովորողի գիտելիքների պաշարը, այլև սովորողի մոտ զարգացնում է մի շարք հմտություններ: Նախորդ և այս ուսումնական տարվա հետազոտական աշխատանքների արդյունքում ես բավականին գիտելիքներ ձեռք բերեցի Կորեայի և Ճապոնիայի մասին, նաև զուգահեռ զարգացան իմ մի շարք հմտություններ, ինչպիսիք են՝ նյութը փնտրել-գտնելու, վերլուծելու, աղբյուրներ որոնելու, աղբյուրների հետ աշխատելու հմտությունները, ինչպես նաև թարգմանչական ունակությունների զարգացումը:

## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. [Александр Мещеряков «Император Мэйдзи и его Япония»](#)
2. [Эпоха Мэйдзи](#)
3. [«Клятва пяти пунктов» императора Муцухито](#)
4. [Прощание с сёгунатом](#)
5. [Как Япония совершила прыжок из феодализма в империализм](#)